Hon. Redaction
de la Revue arménienne HANTESS
au Couvent des R.R. P.P. Mékhitharistes
à VIENNE
VII Mechitharistingasse

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏԱՄՈՒԼ

ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՁԴՐԴ ՏԱՐՒՆ

1894

ԹԻՒ 15 — ՕԳՈՍՏՈՍ 15

ԽՄԲԱԳԻՐ - ՏՆՕՐԷՆ
Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՋՄԻՒՐՆԻԱ
ՏՊԱԳՐ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

	Երես	
Նալեան Պատրիարքի կեանքին	465	Ա. Ց. ԱՅՎԱԶԵԱՆ
Արծիւներուն Բոյնը	470	Ց. Ե. ԳԱՊԱՏԱՅԵԱՆ
Բրօսբեր Մերիմէ	476	Մ. ՆՈՒՊԱՐԵԱՆ
Աստղներու Հետ	481	Տ. ԶՈՒԳԱՍԸԶԵԱՆ
Սփոփանք	481	ԳԷՈՐԳ ՄԱՇՍԷՐ
Գեղադեղի Արուեստը	483	ԻՐՄԱ
Միսի Վրայ Կարեւոր Գիտելիք	486	ՏՕՔԹ. ՓԱՇԱԵԱՆ
Իմաստասէր Մանկիկ մը	490	Վ.
Մեր Գաւառական Ժողովը	494	Վ.
Լրաբեր	495	ԽՄԲ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Իզմիրի համար տարեկան արձ. մէճ. 3 ½
» » *վեցամսեայ* 2
Ֆ. Պօլսոյ և այլ երկիրներու համար տարեկ. 4
կամ 17 Ֆրանք *վեցամսեայ* 2 ½
Աղգ. վարժապետներու համար յիզմիր տարեկ. 2 ½
դուրսերու համար » 3

ԿԱՆԽԻԿ ԼՍՈՒԵԼՔ

Ա. Մասնաւ կ'հրատարակէ նաև ձանաչումներ չափաւոր պայմաններով։

Ո և է նամակ, յօդուած ու գրուած ուղղեալ առ խմբագրութիւն ետ չեն դարձուիր։

Այն բաժանորդներն որ կ'փափաքին ուղղակի ընդունիլ իրենց թերթերն կարող են դիմել առ խմբագրութիւնս իրենց հասցէն որոշակի նշանակելով և միանգամայն տարեգլխին՝ Օսմանեան ֆրանկ ուղարկելով։

Մեր հասցէն,

խմբագրութիւն ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼԻՈՅ — Իզմիր
Rédaction d'ARÉVÉLIAN MAMOUL —Smyrne.

Ս· ՍԻՎՐԻԱՐԵԱՆ ԻԵ ԸՆԿՔ

ՍԵՓ ՎԱՃԱՌԱՏՈՒԹԻՒՆ

Սոյն համբաւաւոր վաճառատունն՝ ուր կը ծախուին գանազան բամպակեղէն, բրդեղէն, մետաքսեղէն նիւթեր, վաղուց կը վայելէ ոչ միայն իզմիրի տակն հասարակութեանց համաքուէն, այլ և իր բոլոր գաւառային յաճախորդներուն վստահութիւնը որ արդէն քանի դնահատած են իր ապրանաց ընտրութեան, տոկունութեան, լաւութեան, չափերու ճշտութեան և գիներու անհամեմատ չափաւորութեան դժալի առաւելութիւններն, այնպէս որ միշտ գոհ մնացած և սոյն վաճառատունը պատուած են իրենց յանձնարարութեամբ։ Ինչպէս յարդ նոյնպէս և այսուհետև Սիվրիսարեան վաճառատունն պատրաստ է միևնոյն դիւրութիւններն ընծայել տեղւոյս յաճախորդներուն, և յատկապէս գաւառացոց ուշադրութիւնը կը հրաւիրէ վերոյիշեալ առաւելութեանց վրայ։ Պարտին վստահ լինիլ թէ իրենց յանձնարարութիւններն գրով կամ դրացակատարներու միջնորդութեամբ, ամենայն ճշտութեամբ ու փութով պիտի կատարուին։ Ընտրակոյս գաւառացի և տեղացի նոր յաճախորդներ պիտի փութան, անձամբ դիմելով վաճառել, ապրանաց դերազանցութիւն, Սիվրիսարեան ընդարձակ մթերանոցներու մէջ՝ որ կը գտնուին՝

Այէ – Եօրիւկ խոշանլէ խուջեսի ծեծ վեռէ խանէ ոսկին։

ՊՕՂՈՍ ԱՐՈՒՀԱՄԵԱՆ

Օսման Զատէ խան, վերէ յարկ, 37, Բէյողլուընըէ Պոլիս

Պատիւ ունիմ ծանուցանել Պատ. Յաճախորդներուս և Արդպ Հասարակութեան թէ կը պատրաստեմ բուն Անգլիական ոխնիով արանց համար ամեն տեսակ հաշակատար հագուստներ։ Լօնտոն հրատարակուող «Տէյլ Ռէֆլէքթ» դերձակներու յատուկ պատկերազարդ հանդէսը կ'ստանամ, որով միշտ օրը օրին տեղեակ կը լինիմ Անգլիական նորամուծութեան։

Վէսթօն	Քոթիսիա	մէճիա	6
Ժաքէթ	»	»	7
Թրաուզիոր	»	»	8

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ — ԿԱՆԽԻԿ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՏԻՕԵՆԻՍ

(GRANDS MAGASINS DIOGENIS)

Պատիւ ունինք ծանուցանել քաղաքիս Պատ. Հասարակութեան թէ ի վաճառ դրած ենք **ԱՄԵՆ** *տեսակ ապրանք* **ԽԻՍՏ ԱԺԱՆ** *գներով, այնքան աժան որ գնողներու* **ԱՆՀԱՒԱՏԱԼԻ** *պիտի երևան։*

Ապրանքներու գիները այսքան կտրել հուս պատճառը նոր գալիքներու տեղ պատրաստելու համար է։

Պատ. Հասարակութիւնը որքան չտապէ այնքան չահաւոր պիտի ելնէ։

ԱԺՆՈՒԹԻՒՆ

ՎԱՃԱՌԱՏԻՒՆ

ՄԵՐ ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Դ. եւ Լ. ԹԷՐԻՏՃԵԱՆ

Հայոց Դէպ Ք–ՂԱՂ

Մեր վաճառատան մէջ կը գտնուի անոյշին ամէն տեսակ պարէն, ինչպէս՝ այիւր, բրինձ, արդար եղ, շաքար, խտհուկ, ձէթ, մաքարօնի, ապուրի համար խմորեղէններ, պանիր, պիսքուիթներ, անուշեղէններ, գինի, քօնեակ, և այլն, և այլն և ամէն ինչ որոց պէտքը զգալի է ամէն տան և ճանապարհորդի մէջ։

Խիստ աժան և ամէն մրցում արհամարհող գիներ։

ՀԱՅԿ ՋԱՆԻԿԵԱՆ

ՄԹԵՐԱՆՈՑ ՎԵՐՄԱՆՆԵՐՈՒ

Ֆիլէ – Իւլ, Ք– 4, 12 և 14

Կը ծախուին զանազան վերմակներ, անկողնի և բազմոցի համար թէ՛ բամպակէ և թէ՛ յարդէ բարձեր, փետրէրէ և վերէրէ։ Նաև Ցեղոյին և եգիպտական ամէն տեսակ բամպակ թէ՛ մեծ և թէ՛ փոքր քանակութեամբ։

Ապսպրանքի վրայ մեծ հոգածութեամբ կը պատրաստուին զարդարուն վերմակներ հարսանեկան անկողնի համար։

Գաւառներէ եկած յանձնարարութիւնք փութով ու ճշտութեամբ կը կատարուին։

ՇԱՏ ԶԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐ

ԱՐԱՆՑ ՀԱՄԱՐ ՕՏՆԱՄԱՆՆԵՐ

Զանազան կաշիներէ, ինչպէս՝ գէվէ դէրի, Ռուբիո, Վիտէլ, տոպրէն, տոլէն և ամառուան համար գունաւոր կաշիներ։

Ոտնամաններու գինը պիտի որոշուի հագնողին ուրքին թուոյն համեմատ։ Ահա ՆՈՐՈՒԹԻՒՆ մը որմէ օգտուիլ կը խրատենք մեր պատ. ցաճախորդներուն և Արգոյ Հասարակութեան, որովհետև՝ այս գրութեամբ՝

0/0 10-15 ՆՈՒՒԱՋ պիտի վճարուի։

ԴՆԵՅՈՑ

Թ– 40 եւ ԶՈՒԼ 48 — ՄԵՓՈՒ 33 եւ

Կօշիկ ներքին կրկնակրքան	Թիւը	ԴՐՉ	7
Կօշիկ ԲՒԼ »	»	»	6
Պօթ Լ.ճաւոր և Լաքոսէ	»	»	3 25
Բօթին ու սուենկաւոր (մանեարլը)	»		2 75
Պլուքէզ ու » »	»	»	2 75
Կէս պլուքէզ և կէս պօթ	»	»	2 50
Ա.քարբին	»	»	2 37 1/2
Բօթին Լուքս	»	»	3 75

Մրանկրաար վերի ցուցակին գիներէն 1/4 մէճիտ պակաս։

Ոտնամանները ի Տարկին 24 ժամէ կը յանձնուին,

Աժնութիւն, գիմացկունութիւն և ճաշակաւոր ձեւաւորութիւն։

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ ԿԱՆԽԻԿ

Սայէ Եօզլէ Եկեղեցւոյն դէմ դրան մօտ, Ք– 47

ԱՄՃԱ ՊՕՂՈՍ Կ. ՕՀԱՆԵԱՆ



ՄԹՐՆՅ· ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐՈՒ

Ն. Ժ. ԲԱՔԱՐԱՔԻ ԵՒ ԸՆԿ·

Ցրկ· Ք·աշ 91 — Շիւէյնոյ 34

Գ·ՆԱԽ, ՓԽԴԲ–ԱԼՔԸ 32/34

Մարդ կրնայ ամէն տեսակ կարի մեքենաներու տէր լլլել, ՄԻՄԻԱՅՆ չարաթական 1/2 մէհիա վճարելով։

Կօշկակարներու, գերձակներու և ճերմակեղէնի կարու հիներու համար՝ կարի մեքենաներու նոր պէսիէմը ամենէ տոկուն, ամենէ արագ, ամենէ դիւրին և առանց ձայնի է։

Մեր վաճառատունէն ծախուած ամէն մեքենայ ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ է։

Մեր ամէն յաճախորդներուն ՋՐԻ զատատուութիւնն և մեքենաներու նորոգութիւնն։

Ամէն տեսակ մեքենաներու նորոգութիւն։

Ասեղ, գերձան, իւղ, չափաւոր դներով։

Համոզուելու համար ԱՆԳԱՄ ՄԸ ՄԻԱՅՆ այցելել պէտք է։

ՎՃԱՐՈՒՄՆԵՐՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԻՋՄԻԻԻ համար — Արժեքին կէսը կանխիկ և միւս կէսը երեք ամսէն։

ԻՋՄԻԻԻ ԴՈՒՐՍ — Կանխիկ։

Ամէն անոնք կ'փափաքին հաստատուն և ճաշակաւոր ու միանգամայն խիստ չափաւոր գիներով՝ կազմեալ գրքեր ունենալ Թող դիմեն, 1857ի իվեր հաստատեալ, Եվանկէլիքօն Ցուենց դպրոցին անցքին ԺՀ Թիւ 8

ատե **ԱՓՈՆԱՍ ԱՆԿԷԼԻՏԻՍ**

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԴԵՂԱՐԱՆ

ՋԱՐԵՀ ՇՆՈՐՀԱԻՈՐ

Հայոց Ք·աշ, Բեշիկթէ Ճարտ

Ամէն տեսակ դեղերու մեծ խանութ պատարատութիւն

Ջափաւոր գիներ

Գաւառներէ եկած հիւանդներու ամէն դիւրութիւն կը տրուի, իրենց հիւանդութեանց տեսակին յարմար բժիշկներ կը ներկայացուին և անանց պէտք եղած դեղերը մինչև իսկ պաւառները կը ղրկուին։

ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԿՓ. ՏԱՐԻ

ԹԻ 15 15 ՕԳՈՍՏՈՍ 1894

ՆԱԼԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԿԵԱՆՔԷՆ

Նալեանի մանրավէպերն, բանաստեղծական ասացուածներն, առածներն, առակներն, հանելուկներն, առեղծուածները, և պատրաստարան սրախօսութիւնները՝ իբերան գիտէին, կ'ըսէին ու կը պատմէին թէ նորին ժամանակակից աղգայինները և թէ՛ յաջորդ սերունդները։

Մինչև ցարդ մեր հրատարակածներէն զատ, դեռ շատ բաներ դուրս կը մնան անոնցմէն, զորս ժամանակը արդէն թաղել սկսած է, ինչպես է հայագործն աշակերտ՝ Կոչ-Յովհաննէսի մը պատմութիւնը, որ կարապետ Պատրիարքէն լսած է եւ իրեն գաբուխ Աւագերէց Արժ. Տէր Խաչատուր քահանային, բայց և այնպես հակակառակ իւր խոստման, ոչ իդիր առած է գայն, և ոչ ալ Նալեանի կենսագրութիւնը ընդլին հաղորդած է ցարդ։

* * *

Նալեան՝ իբր չէզոքա, բաւական թուով բանաստեղծութիւններ թողած է տաճկերէն լեզուաւ, որոնց մէջ նշանաւորագոյններէն համարուած են կէ-լէ պէ-լէ և աշխարհիս ստեղծագործութեան վրայ գրած քերթուածները։

* * *

Արաբերէն և պարսկերէն բառերը ոտանաւորներով մեկնող Թէօֆիկի-վէհպիին նման Նալեան ալ բառգրքուկ մը չինած է, և կը դասաւորէ այսպէս.

Ադուխ, ֆէօմիւր, Մուրխարա։
Կղզի, անունն է, Ադտա։
Ծուռ մի՛ նայիր օտարին.
Էյրի պաքմայըն, եատա կա։

* * *

1728 ին, երբ տակաւին նորընծայ վարդապետ էր Նալեան, Հարուստ մատենադարան մը ունէր, որ կը դոհայնէր իւր հետաքրքրութիւնը, և կը պարարէր իւր երկասէր միտքը և գրագիտական ճաշակը։

Նալեան՝ իւր ունեցած մատենադարանին ճոխութեան առթիւ ալ յատկապէս յիշուած է, Գրիգոր Արշարունեաց եպիսկոպոսի «Մեկնութիւն ընթերցուածոյն Կիւրղի երուսաղէմացւոյն» գրքի օրինակը՝ հասարակաց ընծայելուն համար, որ տպուած է Ադվերդի (ի Սիւնիս) պարան Հախնազարի որդի սիրացու պարոն Շահնազարի, և Գողթնեցի դասընկերին՝ պարոն Յրանիկուի որդի սիրացու պարոն Մուրատին արդեամբ և ծախիւք։

* * *

Յակոբ Նալեան արհի աստուածաբանն նաև Գէորգ Գէնուբեան Յեսուայ որդւոյ Սէբուէոյ մատենին մինչև երեքտասաներորդ գլուխներն գրած է։

Նալեանի սոյն ձեռագիր աշխատասիրութեան առաջին դաշափարոյն եղած է Իւսկիւտարի Ս. խաչ եկեղեց-

ույն Մարտիրոս Աւագ-սարկաւագը, և յետոյ՝ կարսեցի Յակոբ սարկաւագն եւ տպագրուած է 1821 Մարտ 25ին, ի Պօլիս, ի Մխիթարիչս։*

* * *

Նալեանի գլուխ գործոցը համարուղ Աստուածաբանու-ԹԻՒՆը, կամ ընդարձակ բարոզագիրքը, որ կարևոր ու հմտալից դրչագիր երկասիրութիւն մ'է, Ամաչու մատենադարանին նուիրուած է անցեալ տարի՝ աղգային բանասէրներէն գրաբառասիրել Մրմրեան Յարութիւն էֆէնդիի կողմանէ, որ այս օրերս Հերպերդ — Սրէնսը Անգղեացի հեղինակին դատաիրարակութեան վրայ դրած մի ընդարձակ գործը ի հայ թարգմանեց աշխատասիրաբար մի ընտրողական նոր ոճով, և կարևոր ծանօթութիւններով զարդարեց և ի լոյս ընծայեց զայն Մատթէոսեան գեղատառ նոր տպարանէն։

* * *

Նալեան պատրիարքի օրով հրատարակուած է «Հաւատաուանութիւն ընդդէմ երկրաբնակաց Սահմանոց Սիւնեաց արքեպիսկոպոսի» մատեանը, չարտադրեալ ի թուին Հայոց ՋԾԱ, ի կաթողիկոսութեան Գրիգորի Անաւարզեցւոյ։

Սոյն ձեռագիրը ձրի տուած է Թօրգոմեան Գրիգորըն, և ազնիւ երիտասարդ մը գրչուհին ծախքն նուիրած է՝ Ակապատներն ու վանքերը ձրիաբար տարածելու և արժանաւոր եկեղեցականաց բաշխուելու համար։

Տպագրուած է Հակոբ-ՈՒՆը ի Կ. Պօլիս Աստուածատրեան գործատանը, ի հայրապետութեան տեառն Յովհակայ Նորատապակ կաթողիկոսի ամենայն Հայոց։

---

* Այս սարկաւագը՝ անցեալ դարուն մէջ համբաւաւոր տանկագէտ եւ անուանի օրէնագէտ մ'եղած, եւ Ս. Խաչ եկեղեցւոյն բոլոր էջերն հողերն կամ տեղերն փոխադրած ըլլալուն, 1697 ին նոյն եկեղեցւոյ հիմնադիրն եղող Տէր Աբրահամ Եռամեայրէն անմիջապէս յետոյ, Ս. Խաչ եկեղեցւոյն անմահ բարերարաց կարգը դասուած է, եւ յիշեալ աւագ-սարկաւագին անուան յետոյ՝ նոյն եկեղեցւոյ իբրեւ բարերար կը յիշատակուին մեծաւնուն Նալեան Յակոբ պատրիարքին, եւ Թ. թեսեան Յոհաննէս անուն բարեպաշտ ազգայինն, որ Ս. կնոջ փայտեայ օտարէ մը ծախու առնելով, նուիրած է 1777 ին, իբր քնական թաղին Ս. Խաչ եկեղեցւոյն։

Նոյնպէս, Նալեանի նախաձեռնութեամբ և պատրիարքութեան օրով՝ Տաղաւար ճշմարտութեացը երկրորդ անգամ հրատարակուիլն * տեսաւ Մարսիլիոս–Դպրի տպարանէն, ի Հայրապետութեան տեառն Մինասայ ամենայն Հայոց կաթողիկոսին։

* *
*

Նալեանի Ս. Երուսաղէմայ պատրիարքութեան ժամանակ՝ ի լոյս ընծայուած է Նորին Սրբազնութեան աչակերտին՝ կեսարեան Յարութիւնի որդի՝ Պօղոսեցի Աբգէն-Դպրի յօրինած Գէղ Մահմանոյը, որ այրուբէնի կարգաւ դասաւորեալ գնահատեալ երկասիրութիւն մ'է։

Տպուած է սոյն երկը Հայոց Ռձ՚ղը թուականին, ի տպարանի մահտեսի Յովհաննէս սարկաւագին։

Մահմանոց գրքին սկիզբը ընդարձակ նախաբանութիւն մը դրած է Աբգէն–Դպիր, և վիպասիրականն ու պատմաբանական գալափարաց արտայայտութիւնէն յետոյ, գովեստիւք կը խօսի իր բարեբարդիւն վարժապետին, Նալեանին վրայ, որ ի մանկութենէ մինչև ցյաջողուն, անոր դասատուն մէջ ուսած է, և իր սովաձը կը պարտի Նալեանին։

Ձմռնանք յիշել թէ՝ Աբգէն–Դպիր՝ ուրիշ աչխատասիրութիւններ ալ ունի։

Իսկ գալով Յակոբ Նալեանի աչակերտաց, բազմաթիւ ըլլալու են սոսկ։ Եւ մենք չենք կրնար թուել զԺբազդատարար ամենքն ալ յայտնի չանուանել։

Հին եպիսկոպոսները կամ գետուն վարդապետները՝ եթէ իրենց յաջորդ աչակերտներ չի պատրաստեին ու չի նախրէին ազգին, անոնք իրր անբեր կամ անպտուղ ծառ, ինքզինքնին գեհենի արժանի կը նկատէին։

* *
*

Հա՞րկ է ըսել, թէ Նալեան՝ իր բազմակողմանի հըմտութիւնը ցոյց տուած է՝ նաև Գանձաքան ձոնուցման գրքին

---

* Սոյն տպագրութիւնը՝ որ պատրաստուած է Էջմիածնայ միաբան Երեմեայ վարդապետէն, առաջին անգամ տպագրուած է ի կ պոլիս 1701 ին, ի Հայրապետութեան տեառն Գաբրիէլի կաթողիկոսի ամենայն Հայոց։

մէջ, յորում ընդարձակ տեղեկութիւններ տուած է Կիպրոսի վրայ, որուն երկայնութիւնը՝ 100, և լայնութիւնը 50 մղոն գրած է, և որ այսօր չատ կը տարբերի, ինչպէս յիշած երկտասան թուղթաներէն միայն մէկ հատը մնացած է։ Իսկ նկարագրած խել մը առաջնակարգ պատուիներէն միակ խաղողն նշանակելի է ղարդիս։

Նալեան՝ Կիպրոսի վանքերէն միայն նուիրած է Մկրտութեան պատկեր մը, որ այժմ վսխադրուած է յիշեալ կղզւոյն Ս. Աստուածածնայ եկեղեցին։

* *
*

Ընչուք և բազմակարօտ Զիմառան, որու աղքատութեան և տառապանաց մասնակցած էր Նալեան, և իր ուսման ծախուին պատճառաւ՝ ամեն վիշտ ու նեղութիւն յանձն առնելով մեկնած էր անկից, իր վայրկեան օրերուն մէջ չի մոռցաւ զայն, և իւր ծննդավայրը գըտնուած հօրենական տունը՝ դատարին մէջ առաջին անգամ դպրոց մը հաստատելու համար նուիրեց ազդին, և դպրոցին յատկացուց նորաշէն չաղայք մը և մնտաւոր ջրարբի ընդարձակ արտը։

Զիմառան՝ անուշ ջուր չունէր, և տեղացիք պարտաւոր էին եղանակի խստութիւնն առ ոչինչ դրելով՝ հեռի տեղերէ անուշ ջուր բերել։

Նալեան յիշելով իր հայրենակիցներուն այս անտանելի նեղութիւնը և անհանդուրժելի վիճակը, պատրիարքական հարուստ օրերուն մէջ, Օսմանեան բարեխնամ Սուլթան Մահմուտի չնորհիւ, քաղցրահամ ջուր բերել տուաւ, և դիւղին մէջ փառաւորապէս կանդնուեցաւ Ճաչոցաց պէյ-ը, որու վրայ՝ դեռ կ'երևին Նալեանի անմեռ անունը, և հայ տառերով՝ հաստատման տարեթիւը։

Նալեան՝ Ս. Երուսաղիմայ պատրիարք եղած ատեն, Զիմառայի եկեղեցին նորոգելէն զատ, նուիրած է անոր ձեռք մը թանկագին ղեւտա, չատ մը անօթներ և եկեղեցական իրեղէններ, ինչպէս նաև կենաց փայտի մասունքը։

Վերջապէս, Նալեան Ճակոբ պատրիարք, Զիմառայի համար տեսակ մը երկրաւոր նախախնամութիւն հանդիսացաւ, և տեղւոյն ժողովրդոց նիւթական և բարոյական վարգացման ու յառաջդիմութեան ամեն կերպիւ ատատ-

րեց և մեկենաս եղաւ, որը աղաղաւ իւր անունն ալ անդամակից մնայ ու փառաւորուելու, և յարդ տարուէ տալ՝ Ս. Յակոբայ տօնին, համաձայն մատեան մէջ հանդիսապէս յատուկ Ս. Պատարագ կը մատուցուի, հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի, և մատաղներ կ'օրհնուին ու կը բաշխուին։

Յիշատակ բարերարաց օրհնութեամբ եղիցի այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից։

Ա. Ց. Ա.ՑՀԱ.ՋՑԱՆ

ԱՐՄԻՆԵՐՈՒՆ ԲՈՅՆԸ

Պ

Մայր–արծիւը երկալուն սէս՝ Տօնալտ սկսաւ դարձեալ չարժիլ։ Շատ կը փափաքէր հասնիլ բոյնին, և արծուոյն վերադառնալէն առաջ դողնալ ձագերը. բայց չէր գիտեր թէ ո՞րչափ ժամանակի կ'կարօտէր։ Հոս, այս միջոցիս, աւելի փութկոտութիւն ցոյց տուաւ, և ոտից չարժումներէն ժայռի բեկոր մը փրթաւ, որ գահավէժ թափով մը կը չառաչէր լանիստ ձորին մէջ գլորուելով։ Տօնալտի ուշադրութիւնը չակամայ դրաւուեցաւ քարին անկումէն, և անոր դէպ ի խորխորատը անկասելի վազքէն յառաջ եկած մեծաստաստ որոտումները լսելով՝ սկսաւ դգալ թէ սարսուռ մը կը պտտի երակացը մէջ և ամպ մը կը յուզի իւր առկայծեալ աչքերուն մէջ։ Իրեն այնպէս կը թուէր թէ բովանդակ լեռը իր վրայ կը փլչէր, գինքն իրեն հետ անդունդը քաշելով . . . ։

Ապաքէն գրեթէ մարած էր Տօնալտ. և իւր ոտքն գետնին վրայ հաստատելով միայն կրցաւ իւր գլխի պտոյտին դիմանալ։ Երկվայրկեանի մը համար այնպէս անշարժ կեցաւ, գողդոջուն անդամներով և տրոփուն զունգերով։ Բայց և այնպէս կրկին խաղաղեցաւ և, ըստ առաջնոյն, համարձակեցաւ վեր բռնել իւր գլուխը։ Ա՛լ անգամ մ'ալ վար պիտի չնայէր, այդ սոյգ էր. և քանի մը րոպէ սպասելէն վերջ՝ գոց թէ իւր արիութիւնը կը վերստանար։ « Հէյ՛ սէրդն հա՛յ է, » կըսէր նա ինքնիրեն. « և ես պէտք չէ որ մեռնիմ, վասն զի հայրս առանց իմ

օդնութեանս պիտի չկրնայ ի գլուխ հանել։ Ակնթարթի մը մէջ հասաւ բարձրադիր ժայռին ստորոտը։ Բայց տակաւին ուրիշ դժուարութիւն մ՚ալ կ՚սպասէր իրեն։ Հիմա կը տեսնէր թէ այս բոլոր կրող ժայռին գագաթը բաւական բարձր էր քան զոր կարծեր էր յառաջագոյն։ Աւելի դէշը, ժայռին կողերը ողորկ էին մարմարի նման, և ամենէն ճարպիկ մագլցողի մը համար իսկ չկար ո՛ և է դոյզն անհարթութիւն մը իւր ոտքն հաստատելու և ձեռքովը բռնելու։

«Վերջապէս պիտի չկրնամ ելլել . . . մտածեց Տօնալտ։ Եթէ հնար ըլլար իսկ, այսպիսի տեղէ մը կրկին իջնել անօգուտ ճիգ մ՚ըրած պիտի ըլլար։ և այն բարձրութեանը մէջ պիտի մնար սպասելու իրեն օրհասին, այն էր, արծիւները գալով անպատճառ պիտի սպաննէին զինքը . . . ։ Այս միջոցին կայծակի մը արագութեամբ կացինը միտքը ինկաւ, և անմիջապէս փութաց ի գործ՝ ժայռին երեսին վրայ աստիճաններ կոփելով։ Ի մեծ ուրախութիւն իւր, ժայռը շատ կարծր չէր, և Տօնալտ մէկ կողմէն ոտքին դնելու տեղ կը բանար, իսկ միւսէն կը մագլցէր, մինչև որ վերջապէս իւր քրանած ճակատն և գանգրածուփ մազերով ծածկուած չառագնեալ գլխքը երևցաւ գագաթան վրայ, և Տօնալտ՝ իւր անակնկալի ներկայութեամբը՝ խրտեցոյց արծուիկները, որք մարդկային գլխ մը տեսած չէին ցայն ժամ։

Արծուիկները երկուք էին, այլանդակ ու վհատազուրկ, իրենց ծնողաց այդ անմատոյց բարձրութեան մէջ չինած բոյնին մէջ պառկած։ Իրենց չուրջը կային ձկան ոսկորներ և այլ մնացորդներ . . . ։ Անմիջապէս Տօնալտ յափշտակեց իրարու եաեւէ զանոնք և իւր ուսընդանուիթ տոպրակին մէջ զետեղեց, հակառակ իրենց ողբագին ճիչերուն։

Արդ՝ ձեռքերը ազատ էին դարձեալ սկսաւ էջքը։ Թերևս այս ամենէն դժուարն էր, բայց ինքն չկրնար խորհիլ իր առնելիք միւս քայլը, և մոռնալ թէ ինք կախուած էր գրեթէ օդին մէջ, անյատակ խորխորատի մը վրայ։ Զգուշութեամբ ոտքն կը հանէր մէկ ծակէն կը դնէր միւսին մէջ զորս ինք բացած էր։ Այս միջոցին երբէք չնայեցաւ վար։ Արծուիկներուն անդադար չարժուէն տոպրակը վզէն դէպ առջևը կը կախուէր. բայց Տօնալտ կամացուկ մը կը հրէր զայն ետևը՝ վախնալով դի մի զուցէ անոնց ծանրութիւնը զինքը վիհը ձգէ։

Հազիւ թէ հասած էր այն նեղ պարանոցը ուսկից սողոսկե-

լով վար պիտի սահէր, արծուիկներուն լալիւններէն զատ, լսեց վայրագ ճիչ մը որ չսիրահատ արծիւ մը կուգար։ Տօղրակը եռանը հրելով վեր նայեցաւ և տեսաւ մայր–արծիւն որ բոլորակ չրջաններ գծելով օդին մէջ կ'իջնէր չեշտակի իւր վրայ։

Արծուոյն թևերը այնպէս սաստիկ կը բաբախէին որ հովի մը ճռռունչը կը յիշեցնէին։ Տօնալտ իւր բոլոր զօրութեամբը փակաւ ժայռին, գիտնալով թէ միւս արծիւն ալ հեռու չէ մօտենալու. և կ'սպասէր ահեղ ճակատամարտի մը։ Իր կեանքին համար կռուելու գաղափարը թարմ զօրութիւն մը ազդեց սըրտին խորը։ Հանելով դարձեալ կացինը՝ սպասեց մինչև որ մայր–արծիւն կախուեցաւ իր վրան յարձակելու համար։ Բայց Տօնալտ իւր բոլոր զօրութեամբ լաւ նշան մ'առաւ և անվրէպ հարուած մը իջեցուց թռչնոյն թևին վրայ։ Հարուածը ակնկալածէն աւելի յաջողալից եղաւ։ Արծիւն սուր ճիչ մը արձակելով չկանգ առաւ մ'ալ չրջանակել, բայց իւր թևը անկարող կ'ընէր գինք և ուսոի գահավիժեցաւ անդունդը։ Մինչ իւր թևերը կը բաղխէր, վիրաւոր թևէն արեան տարափ մը կարմիր կը ներկէր ապառաժից սեպ գագաթունքը։

Տօնալտ անգամ մ'ալ ազատ չունչ առաւ, և նայեցաւ բոլորտիքը թէ արդեօք հայր–արծիւը կրնար նշմարել։ Բայց, ո՛չ. անոր գալուն յայտարար նշան մը չտեսաւ։ Կարելի եղածին չափ չուտ սողոսկեցաւ պարանոցէն. երբ փոքրիկ արծիւները սկսան իրենց ճիչերը բառնալ և'ս աւելի բարձրաձայն . . . ։

Ը

Բայց մայր–արծիւն իւր բոլոր զօրութիւնը ամփոփեց և թռաւ Տօնալտին վրայ։ Արծիւն՝ իւր զօրեղ մագիլներովը բռնելով Տօնալտին ուսերէն այնպիսի կատաղի ճգտումի մը ըրաւ, որ տղան ձեռքերը ու ոտքերը կեցած տեղէն բարձրացան, և, եթէ տակաւին այն նեղ տեղւոյն վրայ եղած ըլլար, պատանին անտարակոյս պիտի կորսուէր։ Բայց, արդ, բարերաղդաբար աւելի ապահով տեղւոյ մը վրայ կը գտնուէր։ դարձաւ հարուած հարուածի եռանդ զարկաւ վայրագ թռչնոյն որ կը սուսուներ իւր վրայ ճչելով, և չկանալով հարուածել զնա իւր թևերովն, կտուցովը ու ճիրաններովը վերջապէս ամենևն յաջողալից հարուածըն կրցաւ տալ Տօնալտ։ Խորունկ հառաչքով մը թռչունը սուզաւ, իւր կուրծքէն մահացու հարուած մը ստանալով, ձորին

խորութեանց մէջ, իսպառ չելլելու համար անոնի վերատին։ Խեղճ թռչուն, անիկա իր ձեռքէն եկածը ըրաւ որպէսզի փրկէ իր ձագերը այս անզորմ աւազակէն . . . ։

Հիմա որ ալ կռիւը դադրեցաւ, Տօնալտ ինքզինքը չատ յոգնած զգաց։ Հոն քարի մը վրայ երկնցաւ և դոցեց իր աչքերն ի հանգիստ, վերստանալու համար իր կորուսած զօրութիւնը, և շարունակելու իր վտանգալից վայրէջքը։ Յետոյ ելաւ և ապահովապէս շարունակեց իր ընթացքը մինչև որ հասաւ այս բազմավտանգ տեղերուն վերջինին։ Սիկա ժայռին կողին վրայ բացուած և վեց մատնաչափ լայնութիւն ունեցող ուղին էր, որուն առջևը կը բացուէր խորխորատ մը անհունապէս լի բազմաթիւ զահաւանդներով։ Եւ հոս՝ ուր հազիւ կրնար չարժիլ, գարձեալ լսեց մեծ թևերու օդասոյզ բախում մը և ճիչ մը, աւելի վայրագ և աւելի սուր քան զոր լսած էր Մայր-Արծիւէն։ Տարակոյս չկայ թէ խեղճ հայրը վերադարձած էր գտնելու իր աւերեալ բնակարանը ու սիրասուն թռչնիկները։ Արդ՝ ի՞նչպէս պիտի պաշտպանէր դինքն այնպիսի երկիւղալի տեղ մը ուսկից հազիւ կը քալէր։

Այդ միջոցին դիպուածով նշմարեց վոքրիկ խարակ մը որ մօտէն կը բարձրանար և քովինն ալ հաստատուած թուփերէ կազմուած մացառակ մը։ Իր ձախ ձեռամբ ամրապէս փակեցուց այս թփերէն, աջովն հանեց դարձեալ իր վտանգելի կայինը և դէտակն սպառեց արծուոյն գալատեան։

Անագին թռչունը իջաւ վար և թառեցաւ Տօնալտի ուսերուն վրայ։ Իր թևերովը անոր երեսները կը հարուածէր և ահռելի կատղումէն անոր թարմ այտերը կը ճեղքէր։ Խեղճ Տօնալտ կ'զգար թէ երկար պիտի չկրնայ դիմանալ այս ցնորիչ կռցահարութեան, իր կացինովը չէր կրնար հասնիլ թռչնոյն, դի կարճ էր։ Կ'ուզէր և կը ջանար բռնել արծիւն կոկորդէն և կատաղաբար ոլորել զայն. բայց արծիւն իրմէ աւելի ճարպիկ փրթելով՝ կը կացէր անոր ձեռքերը և թոյլ չէր տար Տօնալտ սկսաւ զգալ թէ կացահարութեամբ պիտի սպաննուի, ինչպէս որ չատեր, իրմէ առաջ, սպաննուած էին այս կատաղի թռչունէն։ Տօնալտի ուժը սպառեցաւ. մահուան մէգը սկսաւ պատել իր աչքերը. կը խորհէր թէ կացինով մը չէր կրնար ազատիլ այս թշնամիէն որ անդուլ անդադար կը հարուածէր դինքը . . . երբ յանկարծ կայծակի մը արագութեամբ միտքն ընկաւ . . . դանա՛կը, զոր խոթած էր մէջքը բայց զոր չտանով մը կապ՛ած

էր։ Դուրս հանեց զայն, ակռաներովը քակեց հանդոյցը, և քիչ առաջին իր այս նո՛ր գործիով դիտել սկսաւ դիմագրաւել իր անընկճելի թշնամւոյն։ Իր չունչին ապաւինելով՝ ձեռացը մղկեան չարժուձիերով սկսաւ մխել դաշոյնն արծիւին մարմնոյն մէջ։ Մէկ, երկուք, երեք, չո՛ւն, և ահա այս վերջին հարուածին զգաց թէ դաշոյնը մղեց սիրտը արծիւին. որ այս ժահացու հարուածէն դադրեցուց իր կոցահարութիւնները և ուսերը թողլով իննկաւ քիչ մը հեռուն, վարը, ձորին մէջ, ժայռերուն վրայ, և անշարժ մնաց հոն մեռեալ։ Տօնալտ փրկուա՜ծ էր այլ իր կորսուած արիւնէն և ըրած անձնապաշտպան դերմարդկային ճիգերէն, գրեթէ, նուաղած էր։ Այս անգամ չիչին մէջի կաթը ի մի ումպ կլլեց, և փոքր ինչ կաղդուրուեցաւ և կարող եղաւ անցնիլ այն նեղ ճամբուն մնացեալ մասը։ Յայնժամ լեռան ձորէն քսուելով իջաւ ձորը ուր արծիւն կը կենար մեռեալ, արիւնլուա՜յ։

Գեղեցիկ և ոսկեգոյն արծիւ մ՚էր այն, խիստ մեծ արդարև։ Թևերուն մէկ ծայրէն միւսը գրեթէ իննն ոտք էր։ Տօնալտ անոր վրայ նայեցաւ հպարտութեամբ մը և ուրախութեամբ հոն վայրկեան մը ծնրադրեց կանանչ խոտին վրայ չնորհակալ ըլլալու առ Աստուած իր փրկութեանը համար։ Յետոյ ելնելով արծիւին ճիրանները իրարու կապեց որպէս զի աւելի դիւրութեամբ տանելու կարող ըլլայ։ Ուզեց դաշոյնն ալ գտնել, բայց չկար. կարելի է ժայռերուն մէջ տեղ մը ձգած ըլլար։ «Երբ այս մեծ արծիւը տանիմ պարոնին,» ի՛ըսէր Տօնալտ իւրովի, «անշուշտ, պիտի տայ ինձ նոր մը, եթէ գիտնայ թէ ո՛րչափ դժուարութիւն կրեցի զանի ապաննելու համար։» Յայժամ լեռան տակի դիւր և լայն ճամբէն կրծածին չափ արագ քալեց, ոչ թէ իր տունը, այլ խոտորեցաւ դէպ իջևանը ուր կը բնակէր Տր. Մէյն։

Մէյն

Մարմար մը ճանապարհորդներ որ դեռ նոր հասած էին՝ զարմացմամբ կը նայէին Տօնալտի, և շուրջը կը հաւաքուէին չօչափելու համար արծիւը։ Կը հիանային թէ ինչպէս այսպիսի պատանի մը բռնած և սպաննած էր այս անօրինակ մեծ ու ահագին թռչունը։ Բայց Տօնալտ չէր ուզեր կենալ և պատասխանել անոնց հետաքրքիր հարցումներուն, և ի՛ըսէր թէ պանդք, առանց ուշանալու, Տր. Մէյնին պիտի տանէր։

Տր. Մէյն կեցած էր իր դրանը առջև. և Տօնալտ, յարգական բարեւով մը, «Ահա՛ւասիկ են, տէր, » ըսաւ՝ տոպրակէն

դուրս հանելով արծուիկները որք մկկէն սկսան ցաւակրտել և ճչել անօթութենէն, «կարծեմ անօթի ըլլալու են, աչէր,» ըսաւ Տօնալտ։

«Բայց . . . տղա՛ս» գոչեց Տր. Մէյն զարմանօք, «ի՞նչ վիճակի մէջ կը գտնուիս, ինչ՞ պատահեցաւ։»

Տօնալտ պատմեց նմա իւր պատմութիւնը։ Եւ Տր. Մէյն իսկոյն հնչեցուց զանգակը և հրամայեց բերել քիչ մ՛ուտելիք արծուիկներուն համար և կերակուր՝ Տօնալտին։ «Բայց կ՛ուզեմ գիտնալ թէ ի՞նչ էր նպատակդ՝ վտանգի ենթարկելով կեանքդ և մարմինդ այս թռչուններուն համար երբ ես այլ ևս չուզեր կի զանոնք քեզմէ, ըսաւ լրջօրէն։

«Բան մը չընելով վարձքի արժանի պիտի չըլլայի, տէր» պատասխանեց տղան. «և գիտէի որ դուք չուզեցիք զանոնք, որովհետև կը խորհէիք թէ պիտի վնասուէին։»

«Քաջ և միանգամայն վստահելի տղայ մ՛էք դուք,» ըսաւ ազնուականն. «բայց մի՛ մոռնաք ապագայ ժամանակաց համար, թէ կեանքը թեթևօրէն վտանգել չ՛արժէր։» Նա խոստացաւ Տօնալտին տալ ձեռք մը նոր հանդերձ և դանակ մը, և այցելել զինքն հետևեալ օրն իր տանը մէջ։ Ապա յորդորեց ըզնա որ ամապարէ տուն դառնալ՝ ի սիրտումն իւր վշտահար հօր սրտին։

Տղնքան Մաքիան տխրութեամբ նստած էր իւր տանը մէջ, դեռ նոր տեսած ըլլալով անգութ դրացւոյն սիրուն Պրաուն Քէյդին երեկոյեան կաթը կթելը։ Քեռորդին՝ որուն յուսացած էր, կարող եղած չէր փոխարինել իւր խնդրած դրամը և ուստի ձեռնունայն վերադարձած էր . . . կը զարմանար թէ ինչ ընէ։ Երբ յանկարծ Տօնալտ ներս սլարդեցաւ, իւր երկու բազուկներով փաթթուեցաւ հօրը վզին, ապա վազեց թէյի սեղանին քով, դուրս հանեց երկու ոսկեդրամները և դրաւ զանոնք իւր տարաբաղդ հօրը ձեռացը մէջ։

«Պուռան Քէյպ ճշդն է ալ, ճշդ պէրէր ալ, հայր իմ,» գոչեց Տօնալտ։

Հայրը նախ նայեցաւ ոսկիին և յետոյ իւր զաւկին դառնալով ըսաւ, «Տօ՛նալտ, պատո՞ւով չհեծար այս դրամը։» Բայց երբ նա լսեց իւր որդւոյն բովանդակ պատմութիւնը, այլևս չունեալ ըսաւ, «Ա՛խ, իմ սիրելի՛ զաւակս, Տօ՛նալտ, իմ սիրոյս համար ըրիր այս ամէնը։ Սակայն, ափսո՜ս, ինչ պիտի ընէի եթէ . . .» ալ չկրցաւ շարունակել։ Տօնալտ տարածեց իւր քա-

զուկները գրկեց իր հայրը անհուն դորովով մը, դրաւ իր այտերը իր հօրը այտերուն վրայ, և հայր ու որդի, իրարմէ յուզուելով, հեծկլտանօք լացին . . . :

Յաջորդ առաւօտուն, խոստումին համեմատ եկաւ Տր. Մէյն։ Գովեց Տօնալտի քաջասրտութիւնը, և չնորհակալ եղաւ իրեն դարձեալ. հիգ ոսկինոց դալարուած դրամատոմս (bank note) մը հանեց և զայն սեղանին վրայ դնելով,

« Ասիկա մեծ արծիւին համար է, » ըսաւ։

« Ո՜չ, տէր, » գոչեց Տօնալտ, « թէ՝ նոր դանակ, թէ՝ հանդերձ, թէ՝ կերակուր և թէ՝ ամիկա։ Արծիւը ինքը ատոնց քառո՛րդը չարժեր։ Ասկէց զատ, ես սպաննեցի զայն իմ կեանքն ազատելու համար։ »

« Ճշմարիտ է որդւոյս ըսածը, տէր, » ըսաւ Տընքան. « տուած դրամիդ ետ առնէք, վասնզի չափազանց բարերարեցիք։ »

« Եթէ դուն չառնես զայն, » ըսաւ Տր. Մէյն, « դոնէ առնելու ես զայն Տօնալտի համար։ Վասնզի կեանքը անով ապահովելու դոյզն միջոց մը կրնայ ըլլալ իրեն։ »

« Արդէն արի սիրտ մ'ունի, տէր։ » ըսաւ իր հայրը։ « Եւ աղքատի մը համար ալ կեանքը սիսելու ամենէն ապահով բանն ալ արի սիրտ մը ունեննալն է։ »

« Ո՛չ թէ աղքատին համար միայն, այլ ո՛և է մարդու համար, » ըսաւ Տր. Մէյն։

Վերջին տարիները Տր. Մէյն իր քովը առաւ զՏօնալտ իրրև գործակատար։ « Գիտէի որ կրնայի վստահել ես իրեն, » կ'ըսէր նա յաճախ։ Եւ Տօնալտի բարեկամն ղջացած չէր երբէք հրահանգելով զնա ի քաջասրտութիւն։

ՅՈՒԼ. Ե. ԳԱՊԱՏՃԵԱՆ

ԲՐՕՍՔԵՐ ՄԵՐԻՄԷ

Պ. Օկիւրթէն Ֆիլօն Բրօսքեր Մերիմէի վրայ՝ որ Ֆրանսայի նշանաւոր հեղինակներէ մին կը համարուի, կենսագրական տեսութիւն մը հրատարակած է մօտերս մասնաւոր հատորով մ'որ « Մերիմէ և իր բարեկամները » անունը կը կրէ։ Այս հրատարակութեան առթով գրուած քննադատութեան մը հետաքրքրական մասը՝ որ հեղինակին բարոյական անձնաւորութեան վրայ հե-

տաքրքրական պարագաներ կը պարունակէ, արժան դատեցինք թարգմանել Ա. Մոլլ ընթերցողներուս աչքին տակ դնելու համար։

Մեր նպատակէ դուրս է գրական մարդը նկարագրել։ Ֆըրանսական Ակադեմիոյ անդամ էր Մերիմէ, ծերակուտական մը, պատուոյ Լեգէոնի հրամանատար և եաքէն նոյն կարգին մեծ պաշտօնակալ։ Շատ մը հնախօսական, պատմական և մանաւանդ վիպական գործեր հրատարակած է։ Երևակայական հեղինակներէ գրուած երկու անյայտ (apocryphe) երկեր Թոպէբանէ ապանեցաւ Լոքրկոհէ Քլարա Կազէլէ (1825) և Լոկհըլա՝ իւլիրեան երգերու հաւաքածոյ՝ իբր թէ Մակլանոի մը գըրուած (1827), և որոնց՝ իր գրչի արտադրութիւնն ըլլալը հաստկցուեցաւ եաքէն, մեծ հռչակ տուին իր անուան, և կատարելապէս յաջողած գրական խաբերու երկու անգիւտ օրինակներ կը համարուին իրենց տեսակի մէջ։ Աղջի երկին սկիզբը Քլարա Կիւլալի կենդանագիրը գրուած կը տեսնուէր քօղի տակ ծածկուած, և որ ոչ այլ ինչ էր բացի եթէ բուն իսկ Մերիմէի պատկերը։ Պատրանքն ընդհանուր եղաւ Ֆրանսայի մէջ։ Քննադատ մը — ընդհանրապէս հմտութիւն և գերիվերութիւն ցուցնելու տկարութիւնն ունին քննադատք — մինչև անդամ ելաւ գրեց թէ՝ «Իբր Քլարա Կազէլէ խոքքմանութիւնը չեշտ, այլ ո՞ր քնաքէն անձան էնէյկոպիէնը ևս։ Քլարա Կազէլէ և Լոկհըլայի հրատարակութիւնը Ֆրանսայի գրական տարեգիրներու մէջ անմոռանալի ձնալու սահմանուած դէպքեր էին իրենց հանած դրդիւնով և եաքէն պատճառած ընդհանուր զուարթութեամբ . . .։

Այլ մենք դառնանք ծանօթացնելու Մերիմէն ներքին կուռեան մէջ։

Մ. ՆՈԻՊԱՐԵԱՆ

Մերիմէ չուզեց բնաւ ամուսնանալ, և այս մասին թախանձուած ժամանակ, կ'ըսէր թէ անկախութիւնը կը սիրէր և թէ կը վախնար փոխել իր ունակութիւններ։ Իրապէս՝ իր կեանքի առաջին մասն գրաւուած է երկու — երեք սիրահարութեամբ՝ որոնց պատճառաւ չէր կրնար իր անձը տրամադրել։ Նախ յարաբերութիւն ունեցաւ աչխարհիկ կնոջ մը հետ՝ որ տասն և հինգ տարուան երանուհիննէ մը վերջ երես դարձուց իրմէ։ Այս խզումս իր սիրտը խորտակեց, և այս պատճառաւ առողջութիւնն ալ ոչ սակաւ խանգարուեցաւ . . .։

Այս պատահումէ քիչ յառաջ Մերիմէ Անթանէլոհոյին հետ թղթակցութեան մտած էր, և երկար ժամանակներ անյայտ մնացած այս դաշտնի մէյդալէպի վրայ Պ. Ֆիլօն հետաքրքրական պարագաներ կը պատմէ իր հրատարակած դրքի մէջ։

Մերիմէ նորահաս հեղինակի իր բոլոր փառաց մէջ կը գտնուէր՝ երբ 1851 ին խիստ նրբամիտ և յոյժ բուրաէտ նամակ

մ՝ստացաւ սեպուհի (lady) Ա. Սկզմուր ազնուապետական ըստորագրութեամբ, որ իր Շոթլը Թոխ Բրանդկոն երկասիրութեան վրայ ախորժ խորհրդածութիւններ կ՝ընէր։ Ասոր վրայ նոր դիր մ՝ալ առաւ՝ որ զմայլեցուց զինք իր չնորհալի պարունակութեամբ։ Մերիմէ տեսութիւն մը խնդրեց՝ որ մերժուեցաւ։ Կրկնեց իր խնդիրը . . . և թղթակիցը հուսկ ուրեմն զիջաւ իր աղերսանաց։ Հեղինակը ճամբայ ելաւ հրավառ, և փոխանակ Բրիտանական ազնուապետութեան բարձր տիկնոջ մը՝ գտաւ ռացի աղջկան մը դիմաց գտնուեցաւ, Օրիորդ Ժէննի Տագէն, Պուլօնեը — սիւր — Մէրի նօտարի մը դուստր։ Հրապուրալի օրիորդ մ՝ըլլալ պէտք էր Ժէննի, քանի որ իր ապրեցութիւնը այսպիսի ահագին յուսախաբութեան մ՝առջև կրցաւ մնալ անվրթար։ Անկէ ետք թղթագրական սիրաբանութիւնը չարունակուեցաւ, և Մերիմէ իր ուղևորութեանց մէջ չէր մոռնար գրել նօտարի աղջկան . . . ։

Յունաստանէ դարձին՝ մեր հեղինակը Օր. Ժէննին ի Բարիզ հաստատուած գտաւ, և այդ ժամանակ սկսաւ այդ վիպային յարաբերութեան երրորդ փուլը (phase)։ Մերիմէ մաքխաւէլեան խորամանկութեամբ կարգ մ՝աստիճանական ժամադրութեանց գաղափարն յղացաւ։ Նախ՝ երրորդի մը տունը, եաքը Օրերայի մէկ օթեակը, անկէ ետքն ալ Լուվրի թանգարանը՝ պահապաններու և մարմարեայ աստուածներու աչքի տակ՝ հնութեանց դահլիճին մէջ, այսինքն աշխարհի յարմարագոյն տեղը՝ աներկիւղ ապաւոլանք տալու կանացի ամօթխածութեան։ Անկէ Բուասրանական Պարտէզն անցան՝ ուր կ՝զբօսնուին կենդանեաց առջև հաց նետելով։

Քննադատը հոս խօսքը Պ. Ֆիլօնի կը թողու.

«Մեծ քայլ մ՝առնուած համարուեցաւ երբ օրիորդը զիջաւ Մերիմէի հետ ճեմել Բարիզի չրջակաները. գոնէ՝ խեղճ ու ապաշնորհ բնակարներ՝ որք սակայն անբացատրելի հմայք մը կ՝ազդեն մարդու վրայ։ Ամեն անգամ ընտրուած տեղն աւելի հեռաւոր էր ու աւելի ամայի։ Պատահեցաւ իսկ որ Մէօսօնի և Վէրսիլիի մեծ սարահարթներու միչև գտնուող կանաչաւետ բիւրաւոր ուղիներու մէջ մոլորին անոնք, ուղիներ՝ ուր նոյն իսկ այսօր մէկը կրնայ քալել ամբողջ ժամ մ՝առանց մարդու երես տեսնելու։ Հեղինակ ու բարեկամուհի իրենց տան մէջ գտնուելու՝ գիտակցութիւնն ունէին։ «Մեր պուրակները» կ՝ըսէին անոնք խօսելով այն սիրելի պուրակներու վրայ՝ զորս ամ՝նքան և այնքան անգամներ իրենց ոտից տակ առած էին։ Նորը մամուռով մը պատած այս լռիկ ուղիները՝ ուր մարդ իր քայլերուն ձայնն իսկ չառներ, և որոնց վերևը արևաւիալ սաղարթներ կը տարուբերին հովէ, ո՛ր կ՝առաջնորդէին զիրենք։ Երանութեան, կը յուսար հեղինակը, ամուսնութեան, կը կարծէր ծաղկահասակ օրիորդը՝ որ կուսական յանդգնութեանց գաղտնիքը սորված էր Անգլուհիներէն։ Եւ սակայն Մերիմէ կը տեսանէր թէ չէր տաք-

նար՝ չէր ոգևորեր անդրին։ Միւս կողմէ օրիորդը տարակոյսներու մէջ էր, և՝ հաւանօրէն՝ մեծ արտումթեան մը, քանզի կը սիրէր գՄերիմէ, և այս վերջինս ալ՝ կինք։

Եւ իրենց կեանքը կը շարունակէր, կը շարունակէր չեղիլ իր ընթացքէ՝ իր այն միահարթ նենգաւոր ջուրերու վրայէ՝ որք սահանքներէ յառաջ կը գանուին։ Երբ օրիորդը ժամադրավայրը կը հասնէր՝ զան պաղած կը գտնէր Մերիմէ, պաղած՝ իր մենաւորիկ խորհրդածութիւններու աղդեցութեան տակ։ Անդողդողք մը ակռաք կ'ըլլար խօսակցութեան կրակ տալու։ Կամաց կամաց միամտութիւնը կը հաստատուէր իրենց մէջ. տաք խոսակցութիւն մը կ'սկսէր, որու կը յաջորդէր երկար լռութեան միջոցներ։ «Թևս ձգէ՝ եղած տեղը, գլուխդ հոն դիր», և խելօք պիտի մնամ»։ Խնդիրը կը կատարուէր, այլ սակայն ատով մէկ տեղ կարելի չըլլար խելօք մնալ։ Այն ատեն կռիւներ կ'սկսին, տեսակ մը կրքոտ արտայայտութիւններ, քանզի երկուքն ալ բարկութիւն ունէին իրարու դէմ. երկուքն ալ խաբուած կ'զգային ինքզինքնին։ Ցորդահաս անձրև մը վրայ կուգար. կըծկուած՝ իրար փակած կը քալէին մինչեւոյն անձրևոցի տակ, մանկօրէն խնդալով այս պատահարի վրայ և արդէն իսկ հաշտուած մէկմէկու հետ»։

Այս յարաբերութիւնս երկար տարիներ տևեց իրենց մէջ... կռիւներով և հաշտութիւններով ընդհատուած։ Օրիորդ Տապէն ցվերջ պաշտպանեց ինքզինք իր սիրահարի ձեռնարկներու դէմ։ Եւ Մերիմէ, այդ մարդը՝ որ այնքան դրական կը ճանչցուէր, անվհատ չարունակեց յղել անոր իր սիրաբոյր նամակները...

Այդ նամակները գրած ատեն՝ ունէ՞ր նախազդացում թէ օր մը պիտի հրատարակուէին անոնք։ Այլ ո՞վ կրնայ քննել գրագէտի մը հոգւոյն խորերը։ Որ և է կերպիւ, ապահոց անճանձիր—և այս երկայնամտութիւնը եսասէր բնութեան մ'անտարբերութեան հետ չհամամայնիր գոգսես։

Պ. Օ'Միւսդէն Ֆիլօն սխրալի պարագայ մը կ'աւելցնէ իր պատմութեան։ Կ'ըսէ թէ երբ Մերիմէ Ակադեմիայի մէջ ոտք ելաւ իր ընդունելութեան ճառն արտասանելու, սրահին մարդկանցէ մէկու առջև նստած տեսաւ հէք Ժէննին՝ յուզմունքէ գունատ, և իր ընթերցումը սկսելէ յառաջ, իր թաթպանեալ մատներու ծայրը շուրթերուն մօտեցուց և գաղտնի համբոյր մը խրկեց անոր՝ զոր օրիորդը հասկցաւ միայն։

Այս սիրական յիշատակով պատուեցաւ Ժէննի։ Կրնար նա կարգուիլ, նօտարի պատուական գործ մ'առնուլ Այլ անկեղծութիւնն ունեցաւ աղջիկ մնալ և որ և է մէկու չտալ սիրտ մ'որու ատէր ըլլալէ դադրած էր...։

Համառօտ՝ գայնոտ մ'էր Մերիմէ, սյլ ինքզինքէ ամչցող գայնոտ մ'որ կ'աշխատէր կեղծել միշտ, այն աղքատասէրներու նման՝ որք իրենց ողորմութիւնները կը պահեն ամէն աչք-

երէ՝ իր ճշմարիտ զգացումներու մասին դիմացինները սխալեցնելու տարօրինակ պէրանքը բուն իսկ իր էութեան մէջ կը գտնուէր։ Չկար պարագայ ուր այս հիւանդագին սէրն ալ չերեւայներ ինքզինք։ Մերիմէ ճամբորդութեանց համար հագի կուտար, և ասով մէկտեղ իր նամակներու մէջ չարունակ ողբուկոծներ կային Բարիզէ հեռանալու դժբաղդութեան վրայ. «մարդ Բարիզի մէջ կը զուարճանայ միայն, մի՛ ընէք ինձ բարբարոս երկիրներու խօսքը»։ Եւ սակայն ա՛յն աստիճան կ՝աղորժէր այդ բարբարոս երկիրներէ՝ որ չէր ուզեր անոնցմէ բաժնուիլ։

Այս սուտ սկեպտիկեանը նաև սուտ վտառասէր և սուտ դրանիկ մ՝էր (1)։ Հաւեստ կեանք մը կը վարէր նա, և իր բնակարանը ապարանքի որ և է նմանանք մը չունէր։ Երբէք պաշտօն չվանդեց, և շատ ու շատ անգամներ կայսեր գէմ դնելու իսկ համարձակեցաւ։ Վերջապէս իր սիրածներուն միշտ հաւատարիմ մնաց, և որ և է պարագայի մէջ ո՛չ բարեկամ մը մատնեց և ոչ բարեկամուհի մը։

Ունեցած համբաւէն շատ աւելի լաւ մէկն էր Մերիմէ։ Իր բնութեան մէջ ամենէ որոշ կերպով դուրս ցցածը՝ իր բուռն նախասիրութիւնն էր կանանց համար, գոհ ըլլալով պղտոնական ընորհներէ, և երջանիկ՝ անոնց մէնոլորտին մէջ ապրելուն համար։ Եւ երկրորդ՝ անհոգութիւնն մ՝որ անցեալ պարու աղնուականները կը յիշեցնէր։ Անոնց նման իր քմայքներէ՝ կը կատարէր նա չահի և հաճոյքի մէջ տեղ բնաւ չտատանելով, իր մեծարտութիւնը ո՛չ մէկու առջև կորսնցնելով, նոյն իսկ կայսեր առջև։

Եւ ճիշտ այդ անհոգութիւնը կը բացատրէ մեզ թէ ինչու այնքան խստիւ պատուեցաւ Մերիմէ։ Այն աստիճան կ՝արհամարհէր նա հանրային կարծիքը՝ որ և ոչ իսկ վրայ տարաւ չայիլ կամ լուսաւորել զայն։ Եւ հանրային կարծիքը զոր կը ծաղրէր, վրէժը լուծեց իրմէ։ Բաղդովի իր մտերմական նամակները սիտի վերականգնէին իր յիշատակը։ Եւ իրեն համար ջատագով կանգնողները կինե՛րը եղան, այն սիրական կիները՝ որոնց վրայ հագի կուտար։ Այո՛, միաբերան կը հաստատեն անոնք որ այդ բորբորիտը գորովալի մէկն էր, այդ եսասէրը անձնուէր բարեկամ մը, և այդ սկեպտիկեանը՝ երազող մը։։։

---

(1) Մերիմէ սէր ունէր պաշտպանութիւն կը վայելէր Նաբօլէօն Գ.ի եւ Իւժէնի կայսրուհիին, եւ ազատ մուտք ունէր Թիւյլերիի պալատան մէջ։ Ծ. Թ.

ԱՍՈՒՊՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Աո. Եղիա

Թէ ինչո՞ւ չունիմ սքլացող բեւեր,
Չեմ կրնար բռչիլ, բարձրանալ ի վեր,
Մութ աշխարհի մէջ կեանքս փըլատակ՝
Հըսկեմ յոյսերով աճծիր, անյատակ։

Ինչո՞ւ անարգել՝ աճուն երկինց մէջ,
Աստպեներու հետ չ'առնեմ ելեւէջ,
Ձմըխըրճիմ խորն ամպերու շըղարշ,
Հեռո՞ւ մարմինէն՝ փուռն, գետնաքարշ։

Ինչո՞ւ ամպերէն չ'առնեմ խանդն հոգւոյս
Ու գոռ փայլակէն աչքերուս վառ յոյս·
Բիրտ արգելքը զիս չը կաշկանդէ բող
Ծիրանի յոյսերս չը կըլլէ սեւ հող։

Այս տափակ կեանքը, ես կուզեմ բորուել,
Միշտ բռչիլ արձակ ու ապրիլ հւել,
Ամպերու ծոցը աստղերու մօտիկ
Հանգչիլ ու ճերմել քա՛ղցր, ճանդարտիկ։

Է՛ն, ի՞նչ տրտնջեմ բէ խորհողն Աստուած՝
Մարմնիս սահառնող բեւեր չէ տուած,
Դրաւ Ան իմ մէջ, հոգւոյ լա՛յն բեւեր,
Ձախրե՛լ, սլաց՛ալ, յար երկինքն ի վեր։

1 Յունիս 1892

ՏԻԳՐԱՆ ՉՈՒԳԱՍԸՉԵԱՆ

ՍՓՈՓԱՆՔ

Երբ զիս կը տանջեն յուզմունք ու վիշտեր,
Գարշ ճանճրոյքն սեղմէ հոգիս դառնագին,
Կ'ելլեմ ես յաճախ մաճ գալ առանձին,
Դալար, ծիծաղկոտ ծործորն ու դաշտեր։

Հոն՝ կեանքես ճալած՝ անզգալապես,
Թօթափիլ ճոգեր, ճանճրոյթն ու մորմոք
Կը ծծեմ՝ բնութեան անյագ, լիաթոք,
Հեշտակը անխառն կուսին շունչին պես։

Ամբողջ նոր կեանք մը ճոգիս կ'զգենու,
Կեանք մը անարատ, բոյրի, աղօթքի . . .
Ես բնութեան ձայնին ճմայքին սխրալի,
Երազներու մէջ կը թաղուիմ ընդու։

Երբեմն կը դիտեմ, աչեր անքթիթ,
Հանգչած ծառի մը անոյշ շուքին տակ,
Բնութիւնն — բարիքի անցամաք վըտակ —
Որմէ պիտ՝ բաժնուինք ծեր կամ դեռափթիթ։

Երբեմն ալ կ'ելլեմ խնկոտ, ծաղկասփիւռ
Բլուրներու վերեր, դիտելու հեռուն,
Հեռո՛ւն տարածուող ծովն յար երե՛րուն,
Ոյր անծիր այտեր կը շոյէ զեփիւռ։

Հոս, ծաղիկներու ներքեւ դեռատի,
Առուակն դըղըջէ վըճիտ, ամօքած,
Զաւակ աննենգազնդ, մօր ծոցէն փախած։
Ինքն ալ չը գիտեր թէ ո՞ր պանդուխտ։ . . .

Հոն, զով պուրակ մը ծառոց պտղատու,
Ծառեր՝ ընդգրկած զիրար ճուր սիրով,
Որ մերթ կը սարսռան մեղմիւ, դողալով,
Հովին մտրակին տակը հեշտ, հատու։

Եւ քիչ մը հեռուն բլրակներ մանուկ,
Խմբուած սիրազին ճոխողեն բրբռուն,
Ներքեւ բուսերու ծիլ ծիլ, դալարուն,
Որք դեռ՝ կ'արտասուեն արեւի՛ն զաղտուկ . . . ։

Բերա 1 Մալիս 1894

ԳԷՈՐԳ ՄԱՀԱՍԵՐ

ԳԵՂԱԴԵՂԻ ԱՐՈՒԵՍՏԸ

Ըստ Պ. Շիւլցի՝ գեղեցկանալու արուեստին ամենէ հին նշաններէն մին էր դէմքը ներկել աչքի ջրհնոց դոյներով։ Բուն պատճառն աւելի ապահովութեան հոգն էր քան թէ անմիտութիւն։

Թշնամեաց երկիւղ ազդելու համար՝ մարմինն ու դէմքն կարմրագոյն կ'ներկէին։ Ինչ որ սակայն մարդոց համար խրատելուկ մ'էր կանանց հրապոյր կ'պատճառէր և ռազմասէրներն խաղաղութեան ժամանակն իսկ չէին դադրեր գեղադեղեր գործածելէ։ Իրաւ է որ գեղադեղի այս ծագումն մեզի հաւանական չ'թուիր, բայց տարակոյս չկայ թէ՝ նախկին ժողովրդներն գրեթէ քաղաքակրթեալ ժողովրդոց չափ գեղադեղեր (cosmetique) կ'գործածէին և կ'գործածեն։ Վայրենիներն՝ աւելի անկեղծ՝ չեն ուրանար բնաւ թէ՝ այդ է իրենց առ օրին ամենամեծ զբաղումն։ Ֆիճիի մէջ նորածին մանկան մը իրր առաջին գործ՝ մարմնոյն վրայ կ'գծեն իւղաներկ պատկեր մը, դէմքին վրայ կարմրագոյն նկար մը, և միայն քիթը բնական՝ այսինքն սև գոյնով կ'թողուն։

Աւելի բարեկեցիկ դասուն մէջ դէմքն չորս տարբեր մասերու կ'բաժնեն, որոց իւրաքանչիւրը պէս պէս գոյներով ներկուած է։ Միւս վայրենի ժողովրդներն, հանդիսաւոր օր մը կ'ներկեն իրենց մարմինն ու դէմքն, կիսովին կապոյտ կամ՝ կարմիր և կիսով սպիտակ կամ կանաչ գոյնով։

Յիշենք նաև այս առթիւ որ Ֆիճիի բնիկներն իրենց մարմինն յատկապէս կ'ներկեն տուրքերու հաւաքուած օրն, և թէև վայրենի, այդ օրն իրր տօնական օր կ'նկատեն։

Գեղադեղի արուեստը՝ միմիայն ժամանակի հետ կ'զարգանայ։ Անոր շնորհիւ՝ չեն գործածուիր բնաւ անյարմար ներկեր, այդ արուեստն աւելի նրբին և աւելի կատարուն գեղագիտական վերաբերութեան կ'յանգի։ Նպատակ ունենալով մարմնոյ և դէմքի բոլոր գեղեցկութիւնն երևան հանելու, կ'ճգնին երեսի սպիտակ գոյնն աւելի սպիտակ, այտերու վարդագեղ գոյնն աւելի վարդագոյն, վերջապէս աչքերն սովորականէն շատ աւելի փայլուն ներկայացնել։ Կլեոպատրա թագուհին էր որ աւելի քաջ ըմբռնած էր գեղադեղի գաղտնիքն յԵգիպտոս։

Անդ՝ ամէն մարդ ներկ կ'գործածէր, ամէն մարդ գեղեցկանալու արուեստական միջոցներուն կ'դիմէր. թագաւորներ, թագուհիներ, հարուստ ու աղքատ կիներ, զօրականներ, գիտուններ, արձաններ և մոմիաներ։ Աւելի վերջ՝ երբ Հռովմէական քաղաքակրթութիւնն օր ըստ օրէ կ'յառաջանար, եգիպտացիք այդ արուեստին մէջ՝ որ ամենուն ծանօթ չէր, միշտ իրր ամենէ յաջողակները կ'պարծենային։ Հռովմէացի կայսրուհիներ խիստ սուղ կ'դնէին խիսի տաճարի խարեբաներէն՝ շպարի (cosmetikon) դաղտնիքը, մանաւանդ այն դարմաններն որ դէմքին ոսկեգոյ և փղոսկրի փայլ մը կ'տային։

Բաբելոնեան հին մայրաքաղաքն Նինուէ՝ դէմքը (émaillage) գեղերփնելու եղանակը քաջ գիտէին։ Երեսը մաքրելէն և չիճէլէն ետև՝ կ'շպարէին

սպիտակ խաւով մը որ կիտուածի չափ դիմացկուն ու փայլուն էր։ ի թեւ-փէ, քանի մը երկոտանեակ դարերու չափ հին արկղիկ մը գտան որ լի էր ժամանակին գեղադեղերու հաւաքածոյով։

Հրեայք եւս կ'պաշտէին գեղադեղերն, ինչպես որ կ'տեսնենք Թագաւորաց երկրորդ դրքին մէջ։

Մարգարէներն ատեպ կ'խօսէին այդ նիւթին վրայ և երկնային կայծակներով կ'սպառնային ամեն անոնք որ կ'գործածեն այդ միջոցներն։ Գազդէացիք և Պարսկաստանի բնիկներն, Ասիոյ միւս քաղաքակրթեալ ժողովրդոց պէս, կ'սեւէին իրենց յօնքը և մանաւանդ բաղադրութեան մը շնորհիւ կ'աւելցնէին իրենց աչաց փայլն։ Յատուկ միջոցներ եւս ի գործ կ'դնէին իրենց ակռաները գեղեցկացնելու և պահպանելու համար։

Ցշիք աւելի մարմնական ոյժ կաքաորութիւն կ'ընծայէին քան արդուզարդի կեղծ միջոցներուն։ Բայց և այնպէս, Աթենայի կանայք սպիտակ և կարմրագոյն շպարներ կ'գործածէին և բանահիւսներն մինչև իսկ մեզադրելու ելան Ասպազիան որ նոյնն ի գործ կ'դնէր։ Այն գերագոյն վայրկենին ուր Հարկադրուեցաւ Պրիամի որդւոյն, Բարիզի, դատաստանին ներկայանալ, դէցուհին իսկ շպարուած էր հասարակ մահկանացուի նման։ Ցիշենք նոյնպէս Փրիւնէի կենաց սիրուն միջադէպն որ ակներև ջոյց տալով մեզ շուայտ կնոջ գեղեցկութիւնն, մեր առջև կ'պարզէ այն ամեն աւերումներ զոր գեղադեղերն յառաջ բերած են դատական աշխարհին մէջ։

Մեծ Պրաքսիտէլի՝ հռչակաւոր քանդակագործին կողմէ արուած հոգեկերտիլ մը եւս, կոչնականներն ակամ արքայի խաղը խաղալ։ Աչք և կնայք հետզհետէ հրամաններ կ'արձակէին զոր հանդիսականներն պատրաստ էին գործադրել։ Երբ Փրիւնէի կարգն եկաւ, միթէ նոյն ինքն չէ՞ր որ պազջուր բերել տալով հրամայեց բոլոր կանանց որ իրենց երեսը լուան։ Եւ մինչդեռ Փրիւնէի դէմքն իւր թարմ ու բնական գեղեցկութեան բոլոր փայլքն կ'շողշողար, միւս ամեն կանայք ահաւելի տեսարան մը կ'ներկայէին։ Ահա այս եղաւ այն սոսկալի վրէժն զոր Փրիւնէ իր ոսոխներուն դէմ լուծեց։

Կեսարու ժամանակը սակայն գեղադեղերու կիրառութիւնն շատ աւելի վրդովիչ կերպով կ'տարածուի։ Մեսալինի, Ակրիպինի, Ցոսդինի և ասոնց նման շատ կիներ կ'մրցէին. . . Ներոնի, կալիկիւլայի, Կլոտի, Էլիոկապալի նման մարդոց հետ, որ խանդագին յարած էին դեղադեղերու։ Պօպէ Ներոնի տարփուհին և ապա կինն, որ 65 թուականին կ'սպանուի, իր ամուսնոյն սաքի մի հարուածով հետը կ'տանէր 500 մատակ էշերու երամակ մը, որպէս զի անոնց կաթով լուացուի, որ կ'ներևի թէ կաշիին փափկութիւն տալու յատկութիւն ունէր։ Երբ օրն 70 անգամ (թիւ նուիրական) մատակ իշու կաթով երես լուացին, կրնային վստահ ըլլալ որ դէմքը պիտի դիմանար ժամանակի աղդեցութեան։ Պօպէ սակայն, նոյն ինքն հնարած է դէմքի գեղեցկացման համար մանաւանդ գեղադեղ մը՝ Պոդէնն, որ գարիէ աւելի բուր, մեղրի և հաւկթի բաղադրութիւն մ'է մատակ իշու կաթով խառն, որով դէմքը կ'պատէին անկողին մտնելէ առաջ։ Գիշերը՝ երեսն անով կաւեայ դիմակի մը ներքոյ կ'ստանար զոր առաւօտ կ'հանէին։

Ցոյն կիներն էին մանաւանդ որ հռովմայեցի տիկնոջց մօտ սենեկապանուհւոյ պաշտօնն կ'վարէին, կամ զի անոնք էին յերջանիկ որ իրենց

տիրուհիներու գեղն աւելցնելու կամ անոնց տգեղութիւնն աքօղելու արուեստին աւելի գիտակ էին։ փիւլիս՝ Սօխմա գեղանի հռովմուհւոյն սենեկապահուհին իսկ, ամենէ ազդեցիկ, այսինքն ամենէ աւելի գեղեցկացնող շպարներու վրայ ուշադրաւ դրուած մը թողած է։ Եթէ ուզուէր աւելի ուշադրութեամբ հետազօտել այն հազար ու մէկ դէղերն զոր հին կիներն ի գործ կ'դնէին, հին և նոր աշխարհի շպարագործներն հարստացնելու հնարը պիտի գտնուէր։

Պլինիոս Երէցի Բնական պատմութեան նայելով՝ ինչ ինչ դէղեր շատ մեծ արժէք մը պիտի ունեցած ըլլային։ բանահիւսներն և երգիծաբաններն դէզագեղերու վրայ խօսելով՝ չեն դադրիր բնաւ զանոնք նշաւակելէ և հարուածելէ։ Ովրատիոս ամբողջ հատուած մը գրած է որով կ'երդէ մարդոց հաճելի լինելու համար կանանց ունեցած այնքան գովելի փափաքներն։ Գանուեցան սակայն չարամիտ գրագէտներ որ ծաղր ու ծանակ ըրին հռովմեացի կանանց այդ եռանդն։ ինչպէս Մարթիալ, որ Մեսալինի գեղեցկութեան վրայ խօսելով՝ զարմանալի խստութեամբ և ղայրոյթով կ'խօսի. «Մեսալինի երկու երրորդ մասը փակուած կ'գանուի տուփերու մէջ։ Իր արդուզարդի սեղանն լի է հարիւրաւոր սուտերով և մինչդեռ ինք հռովմ կ'ապրի, իր մազերն Հռենոսի եղերքն կարմրագոյն կ'ներկուին։ Մարդ մը չէ կարող իրեն ըսել Թէ գինքը կ'սիրէ, վասն զի անոր վրայ սիրածն իր անձը չէ, վասն զի ինք ինչ որ է կարելի չէ որ սիրուի։»

Գեղագեղի սէրն, հռովմայեցւոց ժամանակէն անցաւ միջին դարն։ Գերմանացի և գաղիացի կիներ կ'փափաքէին փղոսկրի պէս սպիտակ թևեր ու ձեռներ և վարդագոյն այտեր ունենալ։ Այնպէս որ 12րդ դարու անկլիացի կիներն որ գունատ դէմքերու հոգի կ'տային և որոնք հիւանդագին կերպարան մ'ստանալու համար, մեր արդի փոքրիկ գիշերթիկներու օրինակին կ'հետևէին, այսինքն կարելի եղածին չափ քիչ կ'ուտէին և դժուարամարս բաներ կ'կլլեցին։ Գեղագեղերու և ատեպ արիւնահանութեան շնորհիւ դէմքերն մեռելատիպ գունատութիւն մը կ'ստանային։

Գեղագեղերու արուեստին մէջ՝ իրր վարժ կ'ինշուին մանաւանդ Ցլօրանսի կիներն։ Իրենց համար կնճիռներն աքօղելը բան մը չէր, քանի որ երկար տարիւր տեսակ միջոցներ գիտէին։ Վերջապէս դեղագեղերը Ցլօրանսի կանանց մէջ սկսան այն ասպիճան տիրապետել, որ քահանաներն կարևոր գտան բացարձակ պատերազմ բանալ անոնց դէմ։ Հայր Պերթօլտ քարոզել սկսաւ Թէ «Այն կիներն որ ներկուած դէմք ունին, յանցաւոր են այն պատճառաւ որ Աստուծմէ իրենց արուած դէմքն ծածկել կ'ուզեն։ Ես ինք, բարի Աստուածն, պիտի չիշէ Թէ իր չինած գործէն կ'ամաչէին, ուստի զիրենք դժոխոց անդունդն պիտի նետէ։» Բայց եթէ մեկ կողմէ մեծ էր դժոխքի սարսափն, միւս կողմէ շատ աւելի բուռն էր շպարելու եռանդն և Ցլօրանսի կիներ՝ յաւիտենականին ցասման հանդէպ դոգահար լինելով հանդերձ, չդադրեցան Աստուծոյ իրենց շնորհած դէմքն ներկելէ և գունաւորելէ։ Եւ երբ 17րդ դարուն, գունատ դէմքն բոլոր Եւրոպայի մէջ նորաձևութեան կարգն անցաւ, ոչ ծաղր ու ծանակն և ոչ եղերքն ընդդիմութիւնն կրցան արգելք մը լինիլ. կիները դեղնահար կերպարան մ'ստանալու համար մինչև իսկ աւազ ուտել սկսան։ Ըհա այն ժամանակներն էր երբ սպիտակ դոյնն իր լիակատար իշխանութեան հասաւ։ Ա-

մեն մարդ սպիտակ կ'հագնէր, և արք իրենք անգամ կրել սկսան այն փո-
չեցան ղկանոցներն որ դեռ ներկայ ժամանակիս մէջ՝ հոպիաներն կրկես-
նեռու մէջ և անգլիացի դատաւորներն իրենց պաշտօնն կատարելու առեն
կ'կրեն։

Նոյնը պատահեցաւ նաև Լէդի պէոհէրս առթիւ՝ որ հազիւ թէ մեռա
դատն, և սկսան սիրելի զարդն դառնալ իգական սեռին ի սկզբան, պի-
սակներն նպատակ ունէին միայն երևան հանել դէմքի սպիտակութիւնն,
բայց ժամանակին բերմամբ կիրառութիւնն ընդհանրացաւ այնպէս որ ու-
զողը կ'գործածէր չարաչար, և այդ պիսակներու տեսակն առնուազն քա-
նի կ'հասնէր, այլազան անուններով, ինչպէս համակրելի, դիւթիչ, տար-
փալի, շքեղ և այլն պիսակներ։

Վերջապէս պատմութիւնն թէև չէ կրցած գեղադեղերու հոխտական
ծագումը գտնել, թէև չէ կրցած անոնց բարերշրջութեան օրէնքը երևան
հանել, մեզ կ'յայտնէ, սակայն, թէ՝ գեղադեղերը յայտնուելէն իվեր չեն
դադրած բնաւ իրենց իշխանութիւնն ի գործ դնել։ Իրաւ պահ մը իրենց
տիրապետութիւնն ընկաւ, բայց երբէք չդադրեցան իշխելէ։ Ներկայ ժա-
մանակի մէջ, դեղադեղերն առանց իրենց իշխանութեան գագաթն հաս-
նելու, չեն դադրիր, սակայն, հետզհետէ նշանաւոր աւերումներ գործել։
Մեր սերունդն միայն փոքր ինչ աւելի կեղծասէր լինելով՝ չհամարձակիր
դեռևս բացէ ի բաց զանոնք վատրել։

Թ-ցէ.

ԻՐՄԱ

ՄԻՍԻ ՎՐԱՅ ԿԱՐԵՒՈՐ ԳԻՏԵԼԻՔ

Երբեմն պեռակ միսին գոյնը դեղնած կարմիրին խիստ կար-
միրին մէջ կը տարբերի, վասն զի խիստ մատղաշ և կամ խիստ
ծեր կենդանիներէ կը հայմայթուին. կարուած կտորը թաց և
մեծ հատիկներով ծածկուած կըլլայ. ոչ կարծր, առանց իւղի
առանց առամգականութեան, ճնշման ներքև թուլցող, մի քա-
նի ժամ բացօդեայ մնալով չորցող և սեւցող է, իր ծանրու-
թեան մէկ մասն ալ կը կորսնցնէ, որովհետև նիհար եղերու
միսը շատ ջրոտ ըլլալով չորցածնուն ալէս ծանրութիւնին կը
նուազի։

Մինչ ասոնք և անբոլոր անոր պատճառներ. — Բազմաթիւ
պատճառներ միսը կ'ապրեն և կը տարարաղարեն. 1 — կեն-
դանին կերմանէն քիչ յետոյ, այսինքն մարսողական դործողու-
թիւնը սկսած սիկլոյին սպաննելու։ 2 — կենդանին երկար ճա-
նապարհ քալելով յոգնելէ անմիջապէս վերջը սպաննել։ 3 —
երկահատութեան թերութիւնը։ 4 — խեղդ ուելու և կամ որ

և իջէ հիւանդութեամբ մը մեռնելու վրայ եղող կենդանիի մը ուշ մորթուիլը։ 5 — Սպաննուած կենդանիին փորոտիքը երկար ատեն չը հանելը։ 6 — Զանազան ճանճերէ գոյացած որդնոտումը։

Այս տարբեր պատճառներու պէտք է աւելցնել նաև մթնոլորտին աղտեցութիւնը. արեգակը միսը կը չորցնէ, կը սեւցնէ և կը կարծրացնէ. չոր հովը միևնոյն աղտեցութիւնը ունի, ընդհակառակն տաք և խոնաւ հովը, չարունակական անձրևները, մէգը միսը կը թուլցնեն և անոր կանանչկեկ թուխ գոյն մը և մքլած հոտ մը կուտան որ ապրուել սկսելու կանխանշանն է։

Ա-ջոած ֆէյն յարկ-ըլ-ենը. — Այստեղ ևս պիտի հետևինք դարմեալ Շ. Ժիրար գիտնականին իմաստուն գրչին։

Առողջարար միս մը, այսինքն ուտելու յատկացեալ միս մը պարտի իրեն կցել այն ամեն լաւ յատկութիւնները զորս վերը յիշեցինք։ Ուրեմն կերակուրներէ պէտք է հեռացնել 1 — այն միսերը որոնց նիհարութիւնը այնքան չափազանցեալ է որ ճշմարիտ ուտելիքի մը յատկութիւններէն կատարեալապէս զուրկ են։ 2 — Այն մածուածային միսերը որ միշտ նորածին կամ մեռած ծննած կենդանիներէ կը հայթայթուին և որ անհամ ճաշակ մը, զզուելի երևոյթ մը և մարսողական դործարաններու վրայ լուծողական աղտեցութիւն մը ունին, այս տեսակ միսերը թուլ, մատներու վնակչող, ոսկորներու վրայ թուլօրէն կպցուն, դիւրածռելի ոսկորներով և կարմրադոյն ծուծով են։ 3 — Գէշ մորթուած և կամ ուշ մորթուած կենդանիներու արիւնոտ միսերը։ Այս զանազան պարագաներու մէջ մորթուելուն հետեւեալ օրը միսը կը դեղնի, կը թացնայ, կը ջրոտի, ի մի բան կը տարրալուծուի և հոտը դէշ ու գարշելի կըլլայ, այս միսը ուտելու այնչափ անյարմար է որչափ տարրալաղարութիւնը թունաւոր միքրոպներու ներկայութիւնը բազմապատկէ։

Հիւանդ կենդանիներու ֆէյ. — Սպանդանոցներու միսը բազմաթիւ հիւանդ կենդանիներէ կը հայթայթուի, որ շատ անգամ իրենց վտանգաւոր հիւանդութիւնները մարդերու կ'փոխանցեն։ Խել մը բժիշկներ, անասնաբոյժներ և առողջարաններ հիւանդութեամբ մեռած կենդանիներու միսին պատճառաւ յառաջ եկած դանազան դիպուածներ նշանակած են։

Սակայն ասոր հակառակ ուրիշ շատ հեղինակներ բազմաթիւ պարագաներ յիշած են որ առանց վնասի հիւանդ կենդանիներու միսը կերած են։

Ֆրուրէնս կը յիշէ թէ 1789 ին Սէն Ժէրմէն թաղին աղքատները 300 սատկած ձիերու միսը առանց ոևէ վտանգի կերան։ 1815 ին Սթրազպուրկի պատնէշներուն տակ բնակող բանակը ընդհատ վարակեալ հազարաւոր եզերու միսը կերաւ, մեռնողներու սովորական թիւը առանց աւելնալու։

Պ. Տէքրուա, անգածոր և քոսոտ (Մօրվ և Ֆարսէն) մեռած ձիերու միսը եփելով առանց վտանգի գործածած է, այս անասնարոյժը նաև չատ անգամներ յիշեալ ախտերով սատկած ձիերու միսը առանց փոքր անհանգստութիւն մը ղգալու կերած է։

Անասնարուժական դպրոցներու ընդհանուր քննիչ Բրօֆէսէօր Մընօ կեզրակացնէ թէ «ոևէ փաստ մը չ'կայ որ ագարակի մէջ սատկած իշու և ձիի մնացորդներով սնած խոզերու և հաւերու միսը ուտելը արգիլէ, ինչ որ ալ ըլլայ, խոխանջեկ հիւանդութեամբ վարակուած եզերու, կովերու, ոչխարներու և խոզերու եփած միսը կամ կաթը ուտելու մէջ մարդու համար վտանգ մը չ'կայ»։

Վալ – Տը – Կրասի նախկին աւագաբանութեան դասատուն Շամբօրիօն, հիւանդ կենդանիներու միսը ուտել կ'արտօնէ, բայց միայն այն կենդանիներուն որ սրընթաց պարզ հիւանդութեան մը սկզբնաւորութեան պահուն անմիջապէս կ'սպանուին, և կը մերժէ ժանտային հիւանդութեանց ենթակայ կենդանիներու միսին գործածութիւնը։

Վալ – Տը – Կրասի Բրօֆէսէօր Վալէն կը խորհի թէ պատերազմի ատեն պարնուած ձիերու միսը կարելի է ապահովապէս աննդեան յատկացնել։

Գիտնոց կաճառին անդամ և անասնարուժական վարժարաններու ընդհ. քննիչ Բրօֆէսէօր Շօվօ կը յայտարարէ թէ վէրմոր և խոշոր կենդանիներու միսերը կրնան վտանգաւոր ըլլալ, ուրեմն պէտք է մերժել։

Վերջին խօսք, ներկայ ժամանակիս առողջաբաններու հետ կ'կրկնենք թէ հիւանդ և սատկած կենդանիներու միսերը իրրև վտանգաւոր և վատառողջ ուտելիքներէ բացարձակապէս մերժուելու են։

Մնին ըստ պահպանումը — Բոլոր տանտիկինները գիտեն թէ միսը փայտի, մետաղի, քարի և պնակներու վրայ պահելէ և բաղարձիւ կտորներ իրարու վրայ չարելէ ղգուշանալու է։ Միսը թարմ պահելու ամենէն լաւագոյն միջոցն է զայն թելավան-

դակներու մէջ դնելով արևէն, տաքէ ապահով և օդը բանուկ տեղ մը կախել, այս պայմաններուն մէջ միսը ետտառը 48 ժամ և ձմերը 4 — 5 օր անվնաս կը դիմանայ, նաև միսը քանի մը վայրկեան եռացած ջրի մէջ ձգել հանելէ վերջը ցուրտ և չոր տեղ մը երկար առեն անայլայլ կրնայ պահուիլ. եռացած ջրին տաքութիւնը միսին բնաստիտային նիւթը խտացնելով անոր ե— բեսը իբր պահպանիչ ծեփ մը կը կազմէ։

Միսը աւելի երկար առեն թարմ պահելու համար հարկ է անոր տարրալաղտրութեան դէմ միջոցներ ձեռք առնելով օ— դին չօշափուէն և հետևաբար անոր մէջ գտնուած նեխիչ միքրոպներէն ազատ կացուցանել. այս տեսակէտով զանազան միջոցներ կը գործադրուին։

1· Ցօ—ըով պահել — Միսը երկար ժամանակ պահելու լաւագոյն միջոցը ցուրտն է, այսպէս բեւեռային ծովու սա— ոյցներուն մէջ հազարաւոր տարիներ կոբսուած մնացած բազմաթիւ փիղերու դիակները բոլորովին անայլայլ գտնուած են։ Օֆէօյի ցրտարտադրիչ գործարանին տնօրէնը Պ. Թէլիէ քանի մը տարիէ ի վեր սկսած է ընդարձակ գործեր ընել ցրտին խիստ գեղեցիկ կիրառմամբը· այս արուեստական չափազանց ցուրտը ձեռք կը բերէ էթէր ըսուած հեղուկին չոգիա— ցումովը· այս դեղը կը պատրաստէ ծծմբային ըսուած օդին վրայ ձնծբական ընկա—ին ներգործութեամբը։ Իր հնարած գործիներուն օգնութեամբ կարողացած է միսերը երկար առեն թարմ պա— հել և այս դրութիւնը գործածելով յաջողած է Ամերիկայէն Եւրոպա թարմ միս փոխադրել։

Ցրտարեր յատուկ չոգենաւ մը եզի թարմ միս բեռցած Պոյնէս — Այրէսէն Եւրոպա կը փոխադրէ, այս չոգենաւը 100 օրէն Եւրոպա հասնելով իր փոխադրած միսը կատարեալ թարմ և բոլոր յատկութիւնները կը պահէ· միայն միսին ար— տաքին երեսը քիչ մը աւելի մուխ գոյն կ'առնէ և կը չորնայ, բայց երեսին այս ծածկոյթը վերցնելով կարելի է կարմիր և թարմ միսը տեսնել։ Փարիզի համար դժբաղդութիւն մ'է որ չոգենաւը չ'է կարող մինչև Ատն գետը հասնիլ ու խարսխել, որով հարկ կըլլայ յատուկ երկաթուղիի չոգեկառքով ծովեզեր— քէն փոխադրել, մեծածախ և յամախ թերի միջոց մը որ շատ միսեր երկաթուղիի անցքին վրայ կ'աւրուին։

(Շարունակելի)

Երիզա

ՏՕՔԹ. ՓԱՇԱԵԱՆ

ԻՄԱՍՏԱՍԷՐ ՄԱՆԿԻԿ ՄԸ*

Ը

ՓԻԹ ԵՒ ԾԾԱՆԿ

Բնասէր իմաստասէրները, և յատկապէս Ռուսօ, ամեն առթիւ կ'խրատեն մարդիկն, որ բնութենէ չհեռանան, եթէ կուզեն ամեն բանի մէջ ուղիղ ճամրու մը հետեւիլ և երջանիկ լինիլ, և սակայն մարդիկ բնութենէ հեռանալու այնքան մեծ իւրաքանչիւր ունին, որ ամեն օր նոր հնար մը, նոր գիւտ մը, նոր մեքենայ մը կ'գտնեն որպէս զի կարելի եղածին չափ մօտենան այն ամեն բաներուն որ արուեստական է, կեղծ է, չինծու է։ Եւ բաւական չեն սեպեր կեղծել, բնութիւնը նենգել ալ գիտեն, վասն զի միշտ բնական գործակ մը, այժ մը, իրրև դաւանկից կամ արդարացում օգնութեան կ'կոչեն։

Այս կեղծաւորութեան առջև թող քիչ մը լուեն այն իմաստասէրներն և մանաւանդ աստուածագէտներն որ կ'սնդեն թէ բնութեան մէջ չկայ էակ մը, արարած մը, կենդանի մը, ճճի մը, (այն ժամանակ դեռ միքրոպն անյայտ էր) որ մանաւոր նպատակով մը ստեղծուած չլինի։ Եւ այս վարդապետութիւնն հաստատելու համար, Տէր իմ Աստուած, Աքօդէն սկսելով մինչև Մալպրանչ, քանի քանի մեծ, խոշոր հատորներ գրուան են, որ, աւաղ, փոշիներու և ցեցերու կեր կ'երթան։ Թող գան հիմակ այդ իմաստուններն և տեսնեն թէ՝ ինչ որ բնական է թէ ֆիզիքական, թէ բարոյական և թէ իմացական աշխարհի մէջ, ընկերութեան ծոցէն վտարուած է գրեթէ լիովին, իրրև անհետեր, անկանոն, անպէտ բան, և անոր տեղ կ'տիրապետեն մեր կենաց այլազան գործողութեանց մէջ կեղծիք, ստութիւն, ձև, կապկութիւն, իրենց լծակ ունենալով . . . անչուշտ հնարագիտութիւնը։

Երբ տակաւին զգայուն Թաթիկ մը, անմիտ մանկիկ մ'էի, բնաւ մտքէս չէր անցներ, թէև բնազդով քիչ մը կ'զգայի, որ ծիծմայր մը մօր մը տեղ, ծծակ մը ծիծի տեղ, ալիւրոտ ջուր, կաթի տեղ կրնայ բռնել։ Հիմակ որ մտրուսաւոր մարդ և քիչ մը վնասն լցած եմ, կ'նշմարեմ, որ առ հասարակ երկոտանիքս,

---

* Տես Ա. Մատ., թիւ 8, Մայիս 1։

մանաւանդ Տարվինի մարդն՝ լուսամիտ և բարեշրջիկ, կարգ մ'ընկերային նորահնար օղակներու մէջ բռնուած խալալիկ ենք, պայմանադրական սովորութեանց հապիտներ, որով մարմինն, սիրտն ու միտքն այնպէս լաւ պաշարուած, տոդորուած են, որ՝ ամեն ինչ ունակութիւն դարձած՝ կարծենք թէ բնութեան ծընունդ, բնութեան ծոցն, բնութեան օրինօք կ'ապրինք։ Եւ պատրանքն այնքան կատարեալ է, պուտ պուտ խմուած թոյնն այնքան անազդեցիկ կ'դառնայ, որ իր բնիկ էութեան այլակերպութեան մարդ անդիտակ կ'մնայ։ Եւ այս է թերևս պատճառն, որ ի բնէ այս կամ այն գործողութեան յատկացած գործարան մը, էակ մը, տարր մը—գլուխ, ոտք, ձեռք, լեզու սիրտ եւ—մարդկային ահմանին մէջ. այր, կին, օրիորդ, մանուկ, ծեր, ընկերական ահմանին մէջ. ջուր, ձիւն, կարկուտ, օդերևոյթական կարգին մէջ, չեն կատարեր իրենց յատուկ պաշտօնն, այլ իրարու ահմանին մէջ կ'թևակոխեն և նախկին քաոսին մի պատկերը կ'ընծայեն, այս տարբերութեամբ, որ առաջինն իր այլազան տարրներն դասաւորելու երկանց մէջ կ'գտնուէր՝ բնական զօրութեանց չնորհիւ, արդի տիեզերական դրութիւնն միլիոնաւոր դարերու հոլովմամբ գտնելու մտօք, մինչդեռ այժմեանն կը ձկտի ամեն բնական կարգ կանոն վեր ի վայր ընել։

Հիմակ կարո՞ղ ես ըսել, թէ Արարիչն աչքը տեսնելու, ականջը լսելու, ոտքը քալելու, սիրտն զգալու, ուղեղն խորհելու համար ստեղծած է, քանի որ, ի չնորհս մեքենայից, աչքն ալ, ոտքն ալ, ուղեղն ալ, սիրտն ալ մանաւանդ երկար ականջներն գոյութիւն ունենալէ կրնան դադրիլ առանց զգալի փոփոխութիւն մը բերելու աշխարհի ալրջ բնական կարգին, որ հետզհետէ տիեզերական օրէնք դառնալու կ'սպառնայ։

Ընթերցողին կ'թողում սոյն ծակ փիլիսոփայութենէ, զոր պահ մը քաղաք ծիծա և ամիսներով կլլած ծծակս թելադրեց ինձ, իր ուղած հետևութիւնն հանել, և ես կ'դառնամ օրորոցիս, զի՝ եթէ մարդուս կարելի է խելք հասցնել աշխարհի քարուն, պարտաւոր է, ինչպէս դաստիարակներս համար ջրհեղեղէն, նոյնպէս իրեն համար օրորոցէն սկսիլ։

Արդ՝ միւս օր՝ արևուն հետ աչքս բացի, և ինչ տեսնեմ որբանիս մտա. ոչ մայր, ոչ ծիծմայր, այլ կէս քուն կէս արթուն պառաւեկ կին մ'որ մէկ ձեռնով կ'օրորէր գիս, խըտպտա ծիչերը հանելով, միւսով աչերը կ'չփէր որ բացուին։ Ա՛ա՛խ՝ ծայն ձուն չէի հաներ, մանաւանդ երբ մտաւոր սենեկին

մէջ իրարանցում մը, խուլ ճիչ մը լսեցի, որ սիրելի մօրս ողբին կ'նմանէր։

— Թո՛ղ, թո՛ղ երթայ. ես չե՞մ տանս տիրուհին և զաւկիս մայրն. ես պիտի դիւեցնեմ։

— Աղջիկ, չես մտածեր որ կաթերդ հիմակ ալ քաշուած են, կ'ըսէր հանիս, և եթէ Նունէն, ծիծմայրն, ինչպէս կ'սպառնայ, առնէ քալէ, ի՞նչ պիտի լինի վերջը։ Գոնէ մինչև որ ուրիշ մը տեղը դնենք, թող մնայ, Աստուծոյ սիրուն . . . ։

Իսկոյն հասկցայ, որ առջի իրիկուան վէճը կ'կրկնուէր, աւելի տաք, միւս առաւօտ։ Նոյն պահուն Նունէն ներս սենեակս մտաւ հագուած չքնաղած, երեսներս համբուրեց, ծիծն երկնցուց որ կթեմ և ապա, մնաս բարև ըսելով սևուկ պառաւին, որ միշտ աչքը չփելու վրայ էր, յարեց.

— Ես այս խեղճերուն մէջ գործ չունիմ . . . ։

— Ի՛նչ սմեղուկ կին — փսփսաց սևուկն ականաերուն մէջ, բոլորը ձև է . . . հոգի կուտայ որ մնայ . . . ե՛ս դիտեմ . . . խաղ ունի։

Նոյն պահուն՝ ես սկսայ լալ, տքալ։ Մայրս, հանիս, հայրս, ծառայ և սպասուհի և եթէ չեմ սխալիր, փոքրիկ Ֆինօն ալ ահ, վահ, պղտիկն է, արդեօք ընկա՞ւ վար պառաւով, ներս սենեակս թափեցան։

— Ի՞նչ կայ — պոռաց հայրս։

— Ինչո՞ւ կուլայ, Թաթիկս, մրմնջեց մայրս . . . կատինա բժշկին վազէ. դու կոմիտաս չուտ դեղագործին գնա որ դեղ պատրաստէ . . . ։

— Շուտիկը տանի սա սևերես պառաւն, որու քունը դեռ գլուխն է, և Թոռնիկս օրորելու հալ ու փերմն չունի, ձչեց հանիս, և յաւելցուց քիթին տակէն — կարելի է Թաթիկիս քիմը խածաւ որ արիւննայ և այդ բեւէն ազատի։

Իսկ սպասաւորներն՝ որ իրարու երես նայելով կ'քրթմնջէին, քրթմնջիւն՝ որ կ'նշանակէր թէ՝ լացը բնական բան մ'էր և այդչափ վվլուկ հանելու հարկ չկար, դուրս ելան՝ Թողլով Ֆինօն, որ անդադար պոչն օրելով՝ Թաթիկս կ'լզէր։

Միւս կողմէ Նունէ ծիծմայրս՝ գլուխն ու ծիծերը բարձր, աչերն վառվռուն՝ թէև արհամարհոտ, պահ մը վերէն վար չափելէն ետև ամենքն.

— Բան մ'ըսեմ ձեզ — ըսաւ — մէկ կայ մէկ չկայ՝ Թաթիկէն զատ ձեզ համար աչխարհս մանկիկ չկայ։ Շուտ խորան մը շինեցէք, այդ պէսպէսը վրան դրէք և երկիր պազէք։ Մնաք բարև։

— Ի՞նչ ըսել կուզես, անաչէն. կեցիր նայիմ — գոչեց հանիս գլուխն այնքան ցնցելով որ նաբդին գետինն ընկաւ — կեցի՛ր, քեզ խօսելիք ունիմ։ Մէկ ոսկի ամսականդ երկու պիտի ընեմ. գութ չունի՞ս դու, կնիկ. նայէ ինչպէս ողիկ ողիկ կուլայ թա-թիկս. քեզ կուզէ, կաթ կ'ուզէ. կե՛ցիր, ամեն փափաքներդ պիտի կատարեմ, բաւ է որ աղջիկս մեծ հոգէ մ'ազատի և երեսին դոյնը գայ։

— Բայց աղջիկդ կ'վռնտէ զիս. իր աչքին փուշն եմ, հինգ մատս մոմ ընեմ օգուտ չունի . . . ։

Եւ խօսքն անաւարտ մնաց՝ երբ ահա բժիշկը և չատ մը դրացիներ մեր տան աղմուկը լսելով՝ ներս մտան և բոլորը միասին չուարած սկսան հարցնել.

— Ներո՛ղ լինի, ի՞նչ կայ, ի՞նչ կայ, պլտիկն անհանգի՞ստ է արդեօք, թափոր, անդաստան կա՞յ . . . ։

Եւ բժիշկն՝ որու մայրս սուր և քննախնդիր աչք մը նետելով՝ ըսել կուզէր թէ՝ բոլոր այս անկարգութեան մէջ նա մատուն է, յառաջ անցաւ ժպտուն դէմքով, երեսս ու ճակատս չոյեց, ճիշտ այն միջոցին որ՝ բնական պէտքի մը հարկին տակ՝ կասկարմիր եղած՝ կ'ուռէի, և ապա ծանր ձայնով մ'ըսաւ.

— Բան չկայ. խիթ է. քիչ մ'անիսոնի եղկ ջուր վերչէն և վերջը՝ եթէ լաւ չբանի, վարչէն . . . և կ'անցնի . . . ։

Եւ մայրիկս անհամբեր՝ չուտ մը դիս օրորոցէն հանելով գիրկըն առաւ և դուրս ելաւ՝ թողլով որ Նունէ և հանիս գլուխ գլխի խօսին . . . մինչդեռ հայրս բժիշկին հետ մեկնելով.

— Դու հոս գործը հաշտարար կերպով կարգի դիր — ըսաւ ղեքանչին, ես ալ երթամ միւսին գլուխը կարգամ, և յուսամ որ ամեն բան իր տեղը կ'գանէ։

Ի՛նչ համոզական միջոցներ գործածեց մի քանի օրուան մէջ հայրս մօրս մօտ՝ չդիտեմ, միայն այս գիտեմ որ Նունէ մնաց մեր տունն, մայրիկս անարտունջ գառնուկ մը, իսկ ծծակն անհամ կաթովը իմ անբաժան ընկերս՝ մօրս կամ ծիծմօրս կաթին տեղ՝ որու սահմանքն օրէ օր չոր ու ցամքած փամփուշտներ կը դառնային։

ՄԵՐ ԳԱՒԱՌԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Ֆ

Անկերպարան վիճակը կ'չարունակուի և հետզհետէ կ'ծանրանայ կրօն. ժողովէն և Ուսումն. խորհրդէն զատ՝ մին ծննդ. Գաւառականին, որ անդործ է, միւսն՝ Քալաքականին որ՝ լուծեալ է, բոլոր պաշտօնական մարմիններն ու գործերն դադարման մէջ են։

Հասարակութիւնն հետզհետէ կ'հետաքրքրի. դառն վիճակին հին ու նոր պատճառները կ'փնտռէ, կ'մեկնէ. կ'դիտէ որ ապզ. պաշտօնէից ամսականներն անվճար կ'մնան միշտ, կ'հաշուէ արկղին նոր ի նորոյ բարդուած պարտքն ու տոկոսը, չզարմանար հիմակ թէ ինչու համար նախորդ Վարչութիւնն՝ որ լոկ երեւակայական ելմտացոյցներ չինելու տաղանդն ունէր, իր երկամեայ տեղեկագիրը չներկայեց Գաւառական ժողովին, չզարմանար ապզ եղիկ ապզայնոց ոմանց անտարբեր և չեզոք դրից վրայ և այլոց ապարդիւն գործունէութեան վրայ, որու պատճառն մի քանի անհաշտելի երեսփոխաններու կիրքն ու խռովայոյզ ջիլամոռնիկն էր, և այս անախորժ և ձիւսասաւեր կացութեան վրայ խուլ գանգատներ ընելով՝ դարմանը կ'սպասէ՞ արդեօք Գաւառական ժողովն. . . Թերեւս։

Բայց այդ Գաւառականն ալ հետզհետէ կ'անդամալուծի. իր ձայնն անզօր և որոշումները կ'մնան անգործադրելի. Իր վիճատութիւնն ակներև է։ Հրաժարեալ Քաղ. ժողովն ու Տնտեսական խորհուրդն կ'մերժեն իր հրաւէրն. այն իր կարգած Մանախաւանն՝ որ պաշտօն ունէր երկու անհրաժեշտներու մասին Սպարզալեան Ստեփան էֆէնտիի հրաժարագրի մէջ յիշուած ամրաստանութեան կէտերն քննել, կ'հրաժարի այդ պաշտօնէն՝ թերևս այդպիսի քննութիւն մ'աւելորդ նկատելով, քանի որ Առաջնորդարանի արձանագրութիւններն և ականջալուր վկաներ կրնան հաստատել և քանի որ կասկածի ներքև դնել կ'լինէր Հրաժարագրին պատճառաբանութիւնները, հետևապէս և ներկայելի պեղենտրէն վրայ Գաւառականին տալիք վճիռն առկախ կ'մնայ, մնալով և Ս. Առաջնորդը տարակայ, քանի որ այդ վճռոյն վրայ մտադիր կ'երևիր չարժիլ Սակայն Գաւառ. ժողովին Դիւանն՝ անշուշտ իր ծանր պատասխանատուութիւնն զգալով՝ փորձ մ'ևս կընէ և Արժ. Փոխանորդին ձեռօք ի նիստ կ'հրաւիրէ Յուլիս 28 ին երեսփոխաններն, որպէս զի նոր Քաղ.

ժողով ընտրուի Միայն մեծամասնութիւն չգոյանար, հազիւ 12 հոգի ներկայ կ'գտնուին, և կ'մեկնին վճռած Այն ատեն Գաւառ. ժողովին Ատենապետն՝ Եսայեան Ղուկաս էֆ. իր հրաժարականը կ'ղրկէ առ որ անկ է, այնպէս որ այժմ այդ մարմինն ալ գրեթէ անդամալոյծ՝ անղեկ և անգլուխ կ'տատանի Միւս կողմէ՝ Ս. Աթոռոյն կողմէ կ'հասնի պատասխան առ Ատենապետն՝ յայտարարող որ տրամադիր է՝ երբ ի մտուստ անձնական առողջութիւնը լիովին դանէ, ետ առնուլ իր հրաժարականն, որու՝ Գաւառ. ժողովին պահանջման համեմատ՝ պատճառը կ'յայտնէ նշանակելով երկու եպիսկոպոսներու կողմէ իրեն նկատմամբ եղած անոանձնարկութիւնն և դոհութիւն կը յուշնէ որ Մասնախմբի մը միջոցաւ՝ ըստ որոշման Գաւառական ին, քննութիւն պիտի բացուի և իրողութիւնը պիտի տեղեկացուի իմացածիս նայելով տրուելիք արդար վճիռն իրեւ պատասխան կ'դնէ Ս. Աթոռոյդն իր վերադարձին Ատենապետ էֆ. ըստ որում արդէն հրաժարեալ, առաջնորդական պատասխանագիրն Արժ. Փոխանորդին կ'ուղարկէ և սա ևս ուրիշ ճար չգտնելո, ըստ երևոյթին, եթէ ոչ գրով յայտարարել Գեր. Առաջնորդին իրաց արդի վիճակին, այս է վարչային մարմիններու լուծումն, Ատենապետներուն հրաժարումն, Մասնախնբի ձեռնպահութիւնն, Գաւառականին անբաւականութիւնն և դեղ ու դարման Ս. Աթոռոյդին տնօրէնութեան ենթարկել։

Վերջին տեղեկութեանս նայելով՝ Գաւառական ժողովականներէն ոմանք իրենց հրաժարականը ուղղեր են առ Արժ. Փոխանորդն, և այլք տրամադիր են եղեր անոնց օրինակին հետեւելու, անշուշտ ի բաց առեալ անհրաժեշտներն։

Վ.

ԼՐԱԲԵՐ

ԵՒՐՈՊԱԿԱՆ օրագրեր ընդարձակ տեղեկութիւններ կ'հաղորդեն Ճարոնի, Չինու և Պոռէայի տնտեսական, առևտրական ու քաղաքական կացութեան վրայ և փոփոք կ'յայտնեն որ շուտով վերջ տրուի այն պատերազմին, որ այժմ այնքան չահեր կ'վրդովէ և անուղղակի կ'վնասէ արևմտեան յարաբերութեանց։ Իսկ նաւային և ցամաքային կռիւներն, զոր կ'մղեն այժմ Չին ու Ճարոն դեռևս գուշակել չեն տար թէ որ կողմն ի վերջէ յաղթական պիտի կանգնի, և հաւատ լուրերն մեծամասամբ անորոշ, և երբեմն հակասական կ'ըլլուին՝ մերթ այս

մերթ այն կողման տալով մարտական առաւելութիւնն եւրոպական այն տէրութիւններն որ Խաղաղական Ովկիանոսին մէջ մասնաւոր շահեր ունին պաշտպանելու՝ թէև առ այժմ չեզոք դիրք մը կ'պահեն, սակայն ուշադիր կ'դիտեն պատերազմի ընթացքն և Անգլիոյ կողմէն հաւաքական միջամտութեան առաջարկ մը լինելու նշաններն կ'երևին, Բլքինի վրայ ձարտնցուց յարձակման փորձերն աննեղի նկատելով։ Կ'ըսուի թէ Ռուսիա, որ աւելի իսկական շահեր ունի Մայրագոյն Արևելից կողմերն, անմիջամտութեան կուսակից է և պատերազմի եւից ըսպասելու տրամադիր։ Անգլիոյ մէջ ընկերական խնդիրներ շատունակ վէճի նիւթ են և կառավարութիւնն ժողովրդեան օրինաւոր փափաքները կատարելու յօժարամիտ։ Գերմանիոյ կայսրըն՝ միչտ չարժման մէջ, սիրայիր ընդունելութիւն մը կ'գտնէ իր մեծ մօր՝ Վիկտորիա թագուհւոյն մօտ՝ և իր ուղեւորութիւնն դէպ ի հիւսիս կ'չարունակէ։ Իտալիա՝ Պ. Քրիսպիի ձեռօք ձեռնարկած է հիմնական խնայողութիւններ ընել պետական ծախսուց մէջ և ժողովրդեան վրայ ծանրացած տրոց բեռն ըստ կարի թեթևել, եւմտապոյծին բայն նուազեցնելով։ Աֆրիկիոյ երկրաչարժն՝ Եռնայի չրջակայքն բաւական վնասներ կ'պատճառէ։ Մինչդեռ Ֆրանսայի կիներու բացած հանդանակութեամբ՝ ի պատիւ տիկին Գառնոյի, հանդանակութիւն՝ որու դումարն 100 հազար ֆրանքը կ'անցնի, զաւակի տէր այրիներու վիճակը բարւոքելու նպատակաւ բարեգործական հաստատութեան մը կ'ձեռնարկուի։ Ռուսիոյ Ցարն՝ իր Քսէնիա աղջկան ամուսնութեան առթիւ՝ Միքայէլ մեծ-դքսին կրտսեր որդւոյն հետ, կրթարան մը կ'հիմնէ, ուր պիտի խնամուին և դաստիարակուին աղնուական այլ չքաւոր դասակարգի աղջկունք։ Փառաւոր պալատ մը և կայսերական մեծ ազումար հասոյթ մը յատկացած է այդ հաստատութեան համար։ Յունաստան դեռևս իր եվմտական դործերն օտար տէրութեանց հետ կարգի չդրաւ, առաջարկած պայմաններն անընդունելի մնալով պարտատերց կողմէ։ Մայրաքաղաքի արկածելոց համար նպաստներն կ'յաճախեն մերայնոց ձեռօք, սակայն թշուառութիւնն այնքան ծանր է որ հիմնական դարմաններ կարևոր են որ միայն հացակարօտ դժբաղդներու օրապահիկն, այլ անդործին դրաղմունք և անուն և անպատասպար եղկելիներու պատսպարան ու բնակարան հայթայթելու։ Կեդր. խառն ժողովն Պատրիարքական Տեղապահութեան կոչեց Գեր. Տ. Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեան։

ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ Ա. ՊԱՒԱՍՏԻՒՐԵԱՆ

36350 ՈՍԿԻՆՈՑ
ՀՍԿԱՅԱԿԱՆ ՎԱՃԱՌԱՀԱՆԴԷՍ

ԲՕԼԷՄՈՍԻ

(Ο ΠΟΛΕΜΟΣ)

Հրդեհնալ մթերանոցներէն ազատուած ապրանքներու

Պէտք ունեցողք ու չունեցողք թող փութան գնել այս ապրանքներէն որք անհատուտալի կերպիւ աժան գիներով կը վաճառուին։

Հրդեհէն ազատուած և այսչափ կարևոր զեղչերով ի ցոյց դրուած վաճառքներն հետևեալներն են.

Դարակ՝ շրջազգեստու ըրդէ դործուածներու, վուալներու եւ

Դարակ՝ մանր մունր ապրանքներու, ժանեակ, երիվէ

Դարակ՝ արանց, կանանց և տղայոց վերարկուներու։

Դարակ՝ տպաժոյլ, մուսլինի, ժագօնէլի եւ

Դարակ՝ շապիկի և տարատի վերարկուներու եւ

Դարակ՝ ճերմակեղինաց, խաւասի, չղարչի, վարագոյրի եւ։

Բօլէմոսի մթերանոցներու այս զարմանալի վաճառահանդէսը ի գործ պիտի դրուի նոյն տեղը՝ Պարմաք Գոմու փողոցը, ուր որ հրդեհն երևան եկաւ։

Ժ. Մ. ԳՕՆՏՈՒԼԻՍ ԵՒ ԸՆԿ.

Ծանօթ. — վաճառատունք առաւօտեան ժամը 9 են պիտի բացուին։

ԿԱՐԱՊԵՏ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ

Շատ բարև Ազն. Տիկիններու և Պարոնների Օրիորդներու

Եթէ կուզէք ձեր փափուկ մատներու տակ, դեղձիկ, ձևաւոր, կոկիկ և աղուոր վերջին նորաձևութեանց համաձայն ԹՈՐՇՈՆի գործիք մ՚ունենալ, որ ձեր պարապոյ ժամերուն փոքր ֆէյնէրով, գոյնզգոյն գնդասեղներով, ծովազոյն կամ վարդագոյն թղթի վրայ, ըֆէըր ըֆէըր ներդաշնակութեամբ, ձեր մատներու նրբին ճարտարութիւնն ցոյց տալ, պարտիք հատ մը առնել իմ չինած ԹՈՐՇՈՆի բարձերէն, զորս վերջին կատարելութեան հասուցած եմ, որու ապացոյցն է՝ Ֆրանկաց թագը նշանաւոր վաճառատանց մէջ իմ չինածներուս ի վաճառ դրուիլն, և որու նմանը Իգիպտի մէջ ոչ ոք կարող է չինել։

Ասկէց զատ՝

Մտադիր եմ 1900ի Բարիկի մէջ բացուելիք տիեզերական ցուցահանդեսին հատ մը պրկել ի գնահատութիւն։

Փութացէք ուրեմն ապնիլ Տիրուհիք, իմ չինած մորչոնի բարձերէն մէյմէկ հատ գնելու, որու շահումէն ձեր ընծրհիւ՝ միտք ունիմ առնել մը չինել տալ։

ՄԷԿ ԹՈՐՇՈՆի բարձ, 38 հատ ՖԻԳՕ 30 ֆր., 1 ՀԱՒԱՔԱԿ, 40 ԳՆԴԱՍԵՂ, և ԹՈՒՂԹ միասին՝ 1 Ուրծ. մէճիտ։ Միայն ԹՈՐՇՈՆի բարձը 20 ղրչ անցուկ։

Կեդրոնապէպէ Հայոց Թաղ

ԱԱՐՈՒՊԵՏ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐԶԱՏՈՒՆ

ԳԱՐԼՕ ՊՈՒԴՄԵՃԵԱՆ

Ֆրանկոյ Թաղ, Կէլէհանալուէի 7,

Սոյն գործատան մէջ մեծ խնամքով և դեղարուեստական յաջողակութեամբ կը շինուին ամէն տեսակ պատկերներ ոյլ և ոյլ մեծութեամբ, պատկերաց վերարտադրութիւնք և մեծացնում։ կը ծախուին ամէն տեսակ լուսանկարչութեան վերաբերեալ մեքենաներ և ոյլ գործիքներ վերջին դրութեամբ կատարելագործուած։

Փափաքողաց մասնաւոր արտեստախօսութիւնք.

ԴԻՒՐԱՄԱՏՋԵԼԻ ԳԻՆԵՐ

Պատիւ ունիմ ծանուցանել քաղաքիս Պատ. Հասարակութեան թէ՝ պատրաստ եմ ջրուիլի և Հաւաքիլի պաշտօն կատարել, այսինքն ջրուելիք հրաւիրագիր, մոմառք, վիճակահանութեան տոմներ և այլն և այլն և նոյններուն արժէքը հաւաքել։ Ընդունակ կարող եմ ինձ յարմար զանազան պաշտօն վարել վաճառատուններու մէջ։ Պատ. Հասարակութիւնը կ՚ըղձ է երաշխաւորիլ իմ գործոն ընթերութիւնս և հաւատարմութիւնս առջեւս Հայ Ընթերցատան Պատ. Պարիզեցիներն, փափաքողք համձին դիմել կրնեկը Պարմանք - Պաքալ Պաշտամիտանց վաճառատան դիմացը կամ երկկին և գիշերը Հայ Ընթերցատուն՝ ուր տարին մի վեր գործակատարութեան պաշտօն կը վարեմ։

ԳԵՏՐՈՍ ՓԻՇՄԻՇԵԱՆ

ԼԱ ՖՐԱՆՔՖՕՐԹՈՒԱԶ

(LA FRANCFORTOISE)

ԾՈՎԱՑԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՓՐԱՆԿՖՈՐԹ

Դրամագլուխ ֆր. 6,250,000 Պահեստի դրամ 1,270,312 ֆր.

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւով ուղարկելի ամէն տպրանք, ինչպէս և դրամագրաթղթեր, ապահովագրելի պայմաններով։

Գնող և այլ ամէն տեղեկութեանց համար կը հրաւիրեմ դիմել առ ընդհանուր գործակալն Զմիւռնիոյ և շրջակայից Վէհան Ֆէրիճեան,

ՕԱՀՈՐ Դ. ՎԻՄԵԱՆ

Պատիւ ունիմ ծանուցանել Աբգոյ հասարակութեան թէ՝ ամիջական կերպով կը գործակցիմ ակադայի ամէնէ անտառնելի ցաւերը։ Ակռաներու փտած մասերը կը լեցնեմ փաթիլիւնը ինչ վիճակի մէջ որ ալ ըլլայ, ջղերուն անդգայութիւն տալու համար մի քանի անգամ միայն դարմանելով։ Ցաւած ակռան ապագային ոչ պիտի ցաւի, ո՛չ պիտի մաշի և ո՛չ պիտի թափի։

Այն անձինք որ քանիցս կեղծ ակռաներ չինել տուած են և միշտ դժգոհ մնացած, թող հաճին անդամ մը ինձ դիմել և ես պատրաստ եմ մինչև իսկ ՄԱՇԱՄ ու անզօր լինութեու վրայ զետեղել ակռաներու ամբողջ շարքը և կամ անջատ ակռաներ, առանց դիմելու Թելերու յօդնեցուցիչ գործածութեան։

Նոր դրութեամբ կը հաստատեմ ակռաներու ամբողջ շարքեր անգլիական քաուչուքի վրայ։ Այս դրութեամբ քիմքին իր ՁԱՇԱԿԸ և ընդունի իր ԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՐՈՎՆ ու ՆՐԲՈՒԹԻՒՆԸ ՄԻՇՏ կը պահէն։

Փտած ակռաներու արմատներն անվիճական կերպով և առանց ցաւ պատճառելու կը հանեմ։

Փափաքողք կրնան դիմել Պասմախանէ փողոց, թիւ 120, 8-12 կ. Ա. և 1-7 կ. ե.

ՏԻԳՐԱՆ ՏԻՐԱՑՈՒԵԱՆ

Վ. ՍԻՏԻ — V. SIDI

Մեծ կազմատուն Բարիզեան և Անգլիական ճաշակով։

Ամենաընտիր կազմ, Նուագատետրներու և Տումարներ

ԽԻՍՏ ԶԱՓԱԽՈՐ ԳԻՆԵՐ

17, Պարպարեաց խան, Ֆրանկաց Թաղ

ԱՆԿԼՕ–ԻՍԹԸՐՆ

ՓՕ–ՕՐԻՐԱԹԻՑ ՓՕՄԲԱՆԻ ԼԻՄԻԹԸՑ

Ցրանկաց Ֆոդ

ԿԱՐԵԻՈՐ ՍԶԴ

Դիմեցէք մեր ընդարձակ վաճառատունը ինչ բանէ որ պէտք ունիք, հագուստեղէնէ ինչպէս ուտեստեղէնէ, կամ կարասիէ ինչպէս հօտեղէնէ, պատրաստ հագուստներէ ինչպէս խահանոցի վերարկուներէ ամէն տեսակ պիտոյքներէ, զոնատան բրդեղէնէ և մեծապատիկներէ ինչպէս զարդարանքի առարկաներէ, վերջապէս ԱՄԵՆ ԻՆՉԻ որ ձեր մտքէն ու երեւակայութենէն կրնայ անցնիլ։

Կրնաւէր ԱԺԱՆՈՒԹԻՒՆ պիտի գտնէք, որովհետեւ մեր ապրանքայ տպուռնութիւնը ինչպէս նաեւ գներնուս անհամեմատ աժնութիւնք հանրածանօթ են։

ՎԱՐԶՈՒԹԻՒՆ

L'UNION

(L'UNION)

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ՀԻՄՆԵԱԼ 1828 Ի ՆՆ

ԸՆԿԵՐԱԿԱՆ Դրամագլուխ և Պահեստի Ֆր. 82,000,000

ԻՒՆԻՕՆ ապահովագրական ընկերութիւնս նկատելով որ Անգլ. ընկերութիւնները իրենց արդի սակագինէն 30ին 50 0/0 զեղչ մը կ'ընեն, պատիւ ունի ծանուցանելու իւր բազմաթիւ յաճախորդներուն և արդյ հասարակութեան թէ պատրաստ է շնորհել յաւելուածական 20 0/0 զեղչ մը այն գումարին վրայ զոր Անգլ. ընկերութիւնները կ'ուտանան իրենց սովորական 30 0/0 զեղչը ընելէ յետոյ։

ԺԱՆ Բ. ՊՕՍԿՕՎԻՉ
JEAN P. BOSCOWICH

Ընդհանուր Գործակալ Զմիւռնիոյ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Հիմնուած 1893ին Զմիւռնիա։

Մոյն դպրոցին մէջ տղոց կ'տրուի, հաստատուն կրթութիւն օգտակար գիտութիւններէ վերարերեալ։ Կ'ուսանողուին Գերմաններէն, Ֆրանսերէն և Անգլիերէն որ պարտաւորիչ են։

Դպրոցս կ'ընդունի նաև գիշերօթիկներ։

Դպրոցական տարին կ'սկսի 1/13 Սեպտեմբերին։

Աւելի ընդարձակ տեղեկութիւններու համար պարտ է դիմել գերմաներէն դպրոցին տնօրէնին։

Պուճիխէ Փողց, Թիւ 57.

Է.Տ. ՄԼԻՑ ԷՐՄԴԷՑՒ.

Ասող Բեթլեհէմի կամ սկզբունք Ճշմարտութեան։ Գրեց Մ. ԳՕԶՈՒՆԵԱՆ։ 2 դրշ. փոխանակ 5 դրշ. ի։ կեդ. Պ. Պալնց գրատուն։ 20 Զաքմաքճըլար կ. Պոլիս։

Նոր Այբենարան պատկերազարդ Ֆրանս. լեզուի ի պէտս Հայ ուսանողաց, Հայ. բացատրութեամբ, Գ. ԹԻՐԶԵԱՆ. գին 1 1/2 դրշ. կեդ. Պ. Պալնց։

Արուեստ լուսանկարչութեան։ — 10 օրէն ուսանելի, յօրինեց ԿԱՐԱՊԵՏ Պ. ԲԱՔԱՐԵԱՆ։ Հրատարակութիւն կ. Գ. փալագաշեան, Տպագրութիւն Նշան կ. Պէրպէրեան, կ. Պոլիս. գին 2 դրուշ։

Լրացուցիչ դասընթացք Տարրական քերականութեան արդի հայերէնի. Աշխատասիրեց ՍՄԲԱՏ ԴԱՒԹԵԱՆ։ Տպագր. Արամեան կ. Պոլիս։ գին 3 դրշ.

Ա. կ. ՍԻՒՂԼԻՄԵԱՆ։ Մարդ ըլլալու միջոցը կամ կեանքի մէջ յաջողելու ճամբան։ — կնդրանատեզի Յ. Մատթէոսեան թղթավաճառատունն, կ. Պոլիս. գին ընծր քառթոնէ կազմ 8 դրշ. սակաւոյ և փառաւոր լաթակազմ 12 1/2 դրուշ։

Լեւոն Տօլատեի կրէցիէրնան, Սօնատ Թարգմ. ԽՈՐԻՆ Ս. Վ. ԱՐԴԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԷ։ Տպագր. Գ. Պաղտասարեան կ. Պոլիս։ գին 5 դրուշ։

Համառօտ գրացուցակ Պ. Պալնց գրատուն. Ֆինճանճըլար Նօ. քուշու թիւ 20 կ. Պոլիս. 1894.

Անանք-որ կ'փափաքին իրենց երկերն թերթիս մէջ ծանուցուած տեսնել, կ'խնդրուի որ երկերկու օրինակ խմբագրութեանս հասցնեն։

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

Ի ՄԱՄՈՒԼԵԱՆԻ

	Դահեկան	արժէք
Զատիկ (Վ. Թէր)		5
Ֆիլտին (ապառաժ)		
Մխքրօ-Մեղաս, ժան և Քոլէն, Ձերմակ ու Սև (Վ. Թէր)		4
Վերմէր (Կ. Օթէ)		8
Մենաստանի աղօրին (Տ. Պոման)		3
Սէվիլյի սափրիչը (Պոմարշէ)		3
Գալանիք Բարիզի (Էժէն Սիւ)	8 հատոր	96 50
Հազար ու մէկ գիշերներ	6 »	74 50
Նրնք Հրացանակիրք (Ա. Տիւմա)	3 »	36
Քսան տարի ետք	» » 4 »	46 50
Պրաժլօն դերկոմս	» » 12 »	115
Ամօրի	» »	16 50
Իվանօէ (Վ. Ոքօթ)	3 հատոր	29
Անիծեալն (*** Արբաց)	4 հատոր	38 25
Ամուրիի մը երազները (Ի. Մարվէլ)		6 50
Աչխարհի չրջանն ութսուն օրուան մէջ (Ժ. Վէրն)		12 75
Խորհրդաւոր կղզի (Ժ. Վէրն)	3 հատոր	28
Մանկտիք (Շանֆլէօրի)		9 25
Ինպերիականի մը ցիչատակը		8
Համառօտ պատմ. Բնտիան պիտուքեան (Ա. Պըքլէյ)		10
Մանր վէպեր ու դասեր տղոց համար (ապառաժ)		
Բանալի հայերէն շարադրութեան Բ. տետր		5
Գիտելիք ու պարտիք տղոց Ե. տետր		5
Ընդհանուր պատմութիւն համառօտ Մաս Ա.		5
» » » » Բ.		
» » » Հատոր Բ.		
Առաջին ընթերցարան		2
Երկրորդ ընթերցարան Ե. տետր		2 50
Տունէն դուրս Թադեքաքաշ		5
Իրաւանութիւն Բ. տետր		5
Առողջապահութիւն աղջկանց համար		5
Աւետարան Մատթ. 23 գլուխ (1871–1893)		1242
Նարտան Հոդո (Օնէ)		5
Բերուզակ (Խոսէն)		5
Առանին Տնտեսութիւն		8

Hon. Rédaction
de la Revue arménienne HANTESS